



111

111



Հ Ա Յ Ս Ա Ր

Ի՞նչ է

“ՄԱՅԻՍ 28-Ի ԱՆԿԱԽՈՒԹԻԻՆ” Ը.

ՏՊԱՐԱՆ « ԼԻՔԱՆԱՆ »

Պ Է Ց Ր Ո Ւ Թ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Գաղթահայ իրականութեան մէջ, «Մայիս 28» ի խընկարկուներէն զատ, կը գտնուին նաեւ այնպիսի անհատներ որոնք սքանչանալով հանդերձ Նոյեմբեր 29-ի ծնունդ-եւ. Հայաստանի փառաւոր իրականութեան եւ նւա-հուններուն վրայ, կը շարունակեն որոշ արժէք տալ «Մայիս 28» ի այսպէս ասած «անկախութեան», նըկատելով զայն Նոյեմբեր 29-ը նախապատրաստող քայլ մը պատմութեան մէջ:

Այս պարագան, որ արդիւնքն է տասնեակ մը նախկին «վարչապետ» ու «նախարարներու» տարած աշխատանքին՝ «Մայիս 28» ի անկախութեան» պատմական դիմագիծն ու արժէքը բոլորովին խարդախւած կերպով ցուցադրելու ժողովուրդին, առիթ տուաւ ինծի ամփոփելու սոյն գրքոյկին մէջ, նոյնինքն «Մայիս 28» ը «կերտող» այդ «նախարարներու» անկեղծ խոստովանութիւնները, ինչպէս նաեւ կարգ մը պատմական քաստաթուղթեր, «Մայիս 28» ի անկախութեան» վերաբերեալ:

Էոյս ընծայելով այս գրքոյկը նպատակս եղած է, գաղթահայ եւ մանաւանդ սուրխահայ ժողովուրդին ու դաշնակցական խաբւած եւ դեռ խաբւող շարքայիններուն, տալ «Մայիս 28» ի անկախութեան» եւ յարակից պատմական դէպքերուն շատ ամփոփ, քայց որոշ, փաստարկւած եւ իրական պատկերը:

Նկատի ունենալով տրամադրութեանս տակ զըտնւող պատմական երկերու սահմանափակ ըլլալու պարագան, կը խորհիմ թէ այս գրքոյքը բոլորովին անթերի եւ լման գործ մը չէ:

Այսուամենայնիւ, վստահ եմ թէ ժողովրդական
լայն խաւերուն համար մինչեւ այսօր մութ մնացած
շատ մը կէտեր պիտի լուսաբանւին սոյն գրքոյկով:

Հ.




«... Ազգային խորհուրդն առաւ վճռական քայլ եւ Մայիս 30-ին հրահարակեց, աւելի արտաքին նկունւների տակ, քան իր յօժար կամով. հետեւեալ յայտարարութիւնը, որը բեւե իսկական առումով ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՈՒՄ ԶԷՐ, բայց դեպքերի բերումով դառցաւ այդպիսին:»

Թ. ՎՐԱՅԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրբեջանի անկախութեան հոչակումով ստեղծւած մոր դրութեան հանդէպ՝ Հայոց Ազգային խորհուրդն իրեն ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԽԱՌՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԻԱԿ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ: Որոշ ծանրակէիս պատճառներով բողոքելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական դեկը վարելու համար:»

Թ ի ֆ ի ս, 1918 Մայիս 30 ՀԱՅՈՑ Ա.ԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴ




«... Ազգային հորհուրդն առաւ վնասկան քայլ եւ Մայիս 30-ին հրատարակեց, աւելի արտաքին նկունման սակ, քան իր յօտար կամով. հետեւեալ յայտարարութիւնը, որը բնուիսկական առումով ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՈՉԱԿՈՒՄ ՉԷՐ, բայց դեպքերի բերումով դառցաւ այդպիսին:»

Խ. ՎՐԱՅԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրբեջանի անկախութեան հոչսկումով ստեղծւած նոր դրութեան հանդեպ՝ Հայոց Ազգային հորհուրդն ԻՐԵՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅԿԱԿՈՒՆ ԳԱԽԱՌՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԵՒ ՄԻԱԿ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ: Որոշ ծանրակէիտ պատճառներով բողոքելով մօտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային հորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական եւ վարչական դեկը վարելու համար:»

Թիֆլիս, 1918 Մայիս 30 ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴ



ՊԱՏՄԱԿԱՆ ՈՐ ԴԷՊԲԵՐՈՒ ՇԵՏԷՒԱՆՔՆ Է
 «ՄԱՅԻՍ 28»Ը ԵՒ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՏԱԿ ԾՆԱԻ
 «ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ»Ը

Թիֆլիզի Ազգային Պիւրոն, դաշնակցականներէ եւ խոշոր պուրժուաներէ բաղկացած, 1912-էն սկսեալ ծարական դիւանագիտութեան փէշերը կը լզէր, որպէսզի ռուս կառավարութիւնը յանձն առնէր՝ հայկական «հարց»ի լուծումը, այն էր՝ Թրքահայաստանը աւջատել Օսմ. պետութենէն ու զայն կցել անդրկովկասեան հայկական նահանգներուն եւ այսպէսով ըստեղծել ռուսական կայսրութեան հարաւակողմը ինքնավար նահանգ մը, ուր «պիւրոն» կազմող կապիտալիզմի լաբէններն ու դաշնակցականները ժողովուրդը շահագործելու արծակ-համարծակ դաշտ մը պիտի ունենային, ռուսական պիւրոքրացիայի եւ կապիտալիզմի հովանիին տակ: Բեթրոկրատի կառավարութեան ծրագիրն ալ նման բան մըն էր:

«Թուրքիոյ ձեռքէն առնել Պոլիսը եւ Անատոլուն, ընդարծակել իր երկրի սահմանները եւ յետոյ օգտագործել նոր վայրերը ի նպաստ ռուսական իմպերիալիզմի. այս է եղած ծարական կառավարութեան բաղձանքը»: (1)

Զարիզմի դէմ պայքարելու նպատակաւ ասպարէզ իջած «ընկերվարական» դաշնակցութիւնը, իր երէկի դաշնակից՝ Իթթիհատէն հեռացած, «Թրքահայ ժո-

(1) Կարինեան, «Իմպերիալիստական Պատերազմը եւ Հայաստան» (Արեւմտահայ պագրուրի 6)

դովուրդի ազատագրութեան» դիմակին ներքեւ իթթի-
հատական թուրքոյ դէմ պայքարելու համար նոր
դաշնակից մը կը փնտոէր: Արդէն 1907-էն իվեր «հայ
ագգասէր եւ սոցիալիստ դաշնակցականները հայ
պուրժուազի ներկայացուցիչները դարձեր էին»:

Զարական իմպերիալիզմը, իր «սառազատ ծովեր»
որոնելու քաղաքականութեան միջոցին որպէս խոչըն-
դոտ արդէն ճանդիպած էր գերմանական իմպերիա-
լիզմի ծնունդ՝ Պերլին-Պաղտատ երկաթուղագծի ծրա-
զրին: Հայաստանի համրով Պարսից Ծոց իջնելու հա-
մար պէտք էր կանխել Գերմանական իմպերիալիզմի
«Drang nach Osten» ի (Թափանցում դէպի արեւ-
ելիք) քաղաքականութիւնը, Հայաստանի հարաւային
սահմաններուն ձեռք երկարելով: Զարիզմը իր Հոլաւ-
սանը առանց հայերու՝ Լոպանովեան քաղաքակառու-
թեան ամուր կառչած էր թէեւ, բայց Կովկասէն Պար-
սից Ծոց հասնելու համար իր բանակները թնդանօ-
թային հում միսի, հայ բնակչութեան պէտք ունէին,
որպէսզի կարենային կտրել անցնիլ հայկակրն բար-
ձրավանդակը: Զարիզմը «խոստացաւ» գոհացնել Ազ-
գային Պիւրոյի բոլոր փափարները: «Վորանցով Տաշ-
կովի պալատին մէջ նոյն իսկ պատուոյ սննեակ մը կը
յատկացուի հայ ժողովրդի ինքնակոչ երեք «ներկայա-
ցուցիչներուն»՝ Մեսրոպ Եպիսկոպոսին, Սամսոն
Ստեպանովիչ Արուտիւնովին եւ Ալեքսանդր Խատիս-
եանին... Այդ երեք ասպետները հայ ժողովուրդի
անունով կ'ողջունեն Զարը եւ կը պատրաստեն թնդանօ-
թային այն միսը որ պէտք էր Ռուսիոյ»: (1)

«Միւս կողմէ ալ էջմիածնի սեւ փէշերուն տակ
ծածկւած Պիւրոն, իմա՛ դաշնակցութիւնը, խոստա

(1) Ա. Կարինեան, «Իմպերիալիստական Պասե-
րազմը եւ Հայաստան»:

ցաւ ոռւսական բանակի յառաջխաղացումը ղիւրացընել ապստամբեցնելով թրքահայ ժողովուրդը թրքական բանակներու սրտին մէջ, եւ կամաւորական խմբեր կազմել՝ ծարական զօրքերու կողքին: Թրքահայ ժողովուրդը ապստամբեցնել հակառակ իր կամքին, որովհետեւ «Դաշնակցութիւնը միշտ ալ անկախ գործած է թրքահայ աշխատաւորութենէն եւ միշտ ղեկավարւած է Բաքուցի եւ Թիֆլիզցի եւ արտասահմանեան ուրիշ պուրժւաներու տեսակէտներով: . . . Տաճկահայ հասարակութեան գրեթէ բոլոր տարրերն ալ կ'զգային որ ոռւսահայ պուրժւագիւի քաղաքականութիւնը մահաբեր է տաճկահայ ժողովուրդի համար»: (1)

Իբրեւ առաջին երաշխիք այն համագործակցութեան, դաշնակցութիւնը կը տեսնէր ազատ արծակումը իր այն ընկերներուն, որոնք Չարիզմի կողմէ բանտարկւած կամ արսորւած էին, երբ դեռ Կաշնակցութիւնը «Չարիզմի դէմ պայքարող ընկերվարական կուսակցութիւն էր»: Երկրորդ՝ դաշնակցութեան «մարտական» տենչանքներուն գոհացում տալու համար իրեն կ'արտօնէր կազմել կամաւորական խումբեր, որոնց կազմութեան իսկոյն ձեռնարկեց:

1914 Հոկտեմբեր 20-ին Նիքօլա Չարը պատերազմ կը յայտարարէ Թուրքիոյ դէմ, երբ նոյն օրն իսկ կողկասեան բանակներու հետ կամաւորական խումբերն ալ կ'անցնին թրքական սահմանը: Որոշւած ապստամբութիւններն ալ կ'սկսին ոռւս բանակի յառաջխաղացման հետ: Դաշնակ Պիւրոյին կողմէ թրքահայ ժողովուրդին պարտադրւած ապստամբութիւնները տեղի կ'ունենան, որովհետեւ անկազմակերպ եւ մեծ մասամբ տգէտ ժողովուրդը կը խաբւի խոստում-

(1) Ա. Կարինեան «Իմպերիալիստական Պատերազմը եւ Հայաստան»:

ներէ— «դաշնակցական կուսակցութիւնը հայ պուր-
ժւաներու բոլոր ծրագիրները կը շղարչէր ժողովրդական
եւ հայրենասիրական ու ազգի միութեան փցուն խօս-
քերով... Այդ շատ խորամանկ կազմակերպութիւնը
տեղին համեմատ խօսած է պուրժւական կամ կղերա-
կան եւ կամ սոցիալիստական լեզուով» (1)

1915 ապրիլ 7-ին կ'սկսի Վանի ապստամբութիւ-
նը: Մայիս 3-ին ռուսական զօրքերը կը մտնեն Վան;
Յետոյ տեղի կ'ունենան Սասունի, Մուշի, Բաղէշի, Շա-
պին-Գարահիսարի եւ Զէյթունի ապստամբութիւննե-
րը: Իթիհատական կառավարութիւնը իր քթին տակ,
արտաքին թշնամիին դրդումովը ու իր սեպհական
տան մէջ սկսած հրդեհը մարելու համար ի գործ կը
դնէ իր տարիներէ ի վեր մշակած հայաջնջման ծրա-
գիրը, վերջնականապէս լուծելով հայկական «հարցը»
Թուրքիոյ սահմաններուն մէջ, ու միեւնոյն ատեն իր
երէկի դաշնակից, բայց այսօր ձարիզմի գործիք ու
իր դէմ պայքարող, դաշնակցութիւնը հաշուեյարդա-
րի ենթարկելով: «... Եւ որովհետեւ գիտեն որ եւրո-
պացիներու օգնող, օժանդակող եւ աջակցող տարրերը
թուրքիոյ մէջ ապրող Քրիստոնեայ բնակչութիւնն է
անհրաժեշտաբար, թուրքերը ամենաուժեղ հարւածնե-
րը կը հասցնեն իմպերիալիզմի ծառայող հայերուն,
այսպէսով՝ հայկական կոստրածներու իսկական հեղի-
նակները եւրոպական իմպերիալիստները եւ անոնց
հրահանգով գործող հայերն են»: (1)

Երբ ռուսական բանակը իր գրաւած հայկական
գաւառներուն մէջ անտարբեր դիրք մը եւ նոյնիսկ
թշնամական վերաբերմունք մը ցոյց կուտայ թրքա-
հայ ժողովուրդին, միւս կողմէն աւելի բարեկամական
քաղաքականութիւն մը հետապնդելով զինք կողէն

(1) Ա. Կարինեան «Իմպեր. Պատերազմ եւ Հայաս-
տան»:

հարւածող քրտական աշիրէթներուն հանդէպ, Թիֆլիզի Ազգ. Պիւրոն կուսկածիլ կ'սկսի «ազատարար Իեռիին» հայերու հանդէպ խոստացած բարեկամութեան մասին: Այս կասկածները կ'իրականանան երբ յուլիսին ռուսական կովկասեան բանակը կը լքէ զրաւած հայկական նահանգները առանց ռազմագիտական որեւէ արդարացուցիչ պատճառի: Կանոնաւոր նահանջ չի կազմակերպուիր ո'չ ռուսական բանակի եւ ո'չ ալ զաշնակցական կամաւորական խումբերու կողմէ: Ժողովուրդը այնպիսի խուճապային փախուստի մը կը մատնւի, որ 300.000 հոգիէն հազիւ 100.000ը կը հասնի Գովկաս սովամահ ու կիսամեռ վիճակով: Միւս կողմէ Անատոլուի եւ Կիլիկիոյ հայերն ալ հարիւր հազարներով կ'ոչնչանային արդէն Սուրիոյ անապատներուն եւ Եփրատի ալիքներուն մէջ...

Ահա թէ մէկ տարւայ ընթացքին ի'նչ արժեք հայ ժողովուրդին դաշնակցութեան ձեռքով ծարակական իմպերիալիզմի գործիք դառնալը:

1915-ի վերջերը Գովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովը կը կոխարինուի Նիքոլա Նիքոլայէվիչով, որու օրով նախկին քողարկւած հայատնաց քաղաքականութիւնը այս անգամ բացորոշ կերպով ի գործ կը դրւի: 1916-ի ձմեռան ռուսական զօրաբաժինները վերստին կը հասնին մինչեւ Էրզրում: Ազգային պիւրոն կը դիմէ փոխարքային որ հայ զաղթականները իրենց տեղերը ետ դրկին: Սակայն այս առաջարկը կը մերժուի, քանի որ արդէն քրտական աշիրէթներն ու ռուս կողակները հայ գիւղացիին դարաւոր օճախին տիրանալու սկսած էին: Դաշնակցութիւնը դեռ նոր զգաստանալու սկսած էր, թէ ինք իր ստեղծած բոլոր միջոցներովը ոչ միայն մէկ միլիոնէ աւելի հայերու կոտորածին պատճառ նանդիսացած էր, այլ միեւնոյն ատեն ծարակական իմպերիալիզմի նւաճողական

քաղաքականութեան յաջողութիւնը դիւրացուցած էր:

«Մտածւում էր զրաււած վայրերը յանձնելու ոուս զաղթականներին: Թրագրւում էր Ալաշկերտի ու եփրատեան կազակութիւն հաստատել: Թիւրքահայ զաղթականների վերադարձն արգիլւեց իրենց տեղերը: Ինչ որ մուք, այն օրերին դեռուս անհասկնալի. դաւ եր լաւուում հայ ժողովրդի դէմ: Յետագային, սակայն, յայտնի եղաւ, որ դաշնակից պետութիւնները հայերի զլխին խաղացել էին ամեցանեց խաղերից մէկը:

«1916 թւի գարնանը, Լոնտոնում եւ Պետրոկրատում կատարւած բանակցութիւնների հետեւանքով, Ֆրանսիան, Մեծն Բրիտանիան եւ Ռուսաստանը ստորագրել էին Թիւրքիայի անդամահատման զաղտնի համաձայնութիւնը, ըստ որի հայերի խոստացւած հողերը բաժանւում էին երկու մասի: Էրզրումի, Վանի, Բիթլիսի ու Տրապիզոնի վիլայէթները ստանում էր Ռուսաստանը, Միւրիան եւ Կիլիկիան մինչեւ Խարբերդ ստանում էր Ֆրանսիան: Այսպէսով իրագործւում էր Գոլիցիներին ու Լորանով-Ռոստովսկիներին երազը — Հայաստանն առանց հայերի:» (1)

Սակայն Ս. Վրացեան կը մոռնայ ըսելու, թէ իր կուսակցութիւնը մեղսակից եղաւ այդ «ամեցանեց խաղերից մէկին»: Նոյնպէս ան չուզէր խոստովանիլ թէ Հոկտեմբերեան պրոլետարական աշխարհասասան յեղափոխութիւնն էր, որ խորտակելով ծարն ու ծարիզմը եւ անոր վարած նւտեղական քաղաքականութիւնը, արգիլեց իրագործումը «Գոլիցիներին ու Լորանով-Ռոստովսկիներին երազին», եւ ծնունդ տւաւ Սորհրդային Սոցիալիստական Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութեան:

(1) Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւնը:»

Հոկտեմբերեան յեղափոխութենէն սուաջ Բեթրոկրատի մէջ կազմեաժ էր Քերենսքիի կառավարութիւնը (Փետրուար): Թէ Դաշնակցութիւնը ի՛նչպէս ընդունեց այդ պուրժուական կառավարութիւնը, լսենք Յ. Քաջազնունին:

«Մեր սուաջ բացեցին անակնկալօրէն նոր հեռանկարներ: ... Իբրեւ դեմոկրատներ եւ սոցիալիստներ մենք ցնժութեամբ ողջունեցինք նոր կարգերը, ապա, իբրեւ ազգային քաղաքական կուսակցութիւն, առանձնապէս եւ յատկապէս ոգևորեաժ էինք իշխանութեան ապակեղրոնացման, ծայրագաւառների եւ ազգութիւնների ինքնավարութեան խոստումներով: Սկսանք եռանդուն աշխատանքի): (1)

Կը տեսնուի որ Քերենսքիի ժամանակաւոր կառավարութենէն դաշնակցութիւնը աւելի բան չէր սպասեր քան «ապակեղրոնացում» եւ «ինքնավարութիւն»:

Անմիջապէս Թիֆլիսի մէջ կազմեցաւ «Անդրկովկասեան Կովսարիատը», որը Բետրոկրատի ժամանակաւոր կառավարութեան անունով Կովկասը կառավարելու կոչեաժ էր: Կովսարիատը փալիսիոն կառավարութիւն մըն էր, քաղկացաժ վրացի Մ. Դ. Մենշելիկներէն, Ատրբեջանի Մուսաօթէն եւ Հ. Յ. Դաշնակցութենէն: Սոյն կովսարիատին մէջ գերիշխող դիրք ունէր վրացի մենշելիկեան կուսակցութիւնը:

1917 սեպտեմբերի վերջերուն Թիֆլիսի մէջ կազմեցաւ Հայ Ազգային Կեդրոնական Խորհուրդը, ուր գերիշխող էր կովկասահայ պուրժուազիան յանձինս Դաշնակցութեան, որ այլեւս ասպարէզ կ'իջնէր որպէս հայ ժողովուրդի միակ լիազօր մարմին:

(1) Յ. Քաջազնունի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Անեւլիք Զունցի Այլեւս».

Մէկ ամիս յետոյ տեղի ունեցան Անդրկովկասեան պատգամաւորական ընտրութիւնները համառուսական Սահմանադիր ժողովի համար: Պայքարող կուսակցութիւններու մէջ Մենշեիկները շահեցան 12, Մուսավաթը 10, իսկ Դաշնակցութիւնը 9 տեղ: Ասոնք կը «ներկայացնէին» Անդրկովկասի գլխաւոր երեք ազգութիւնները. վրացի, թաթար եւ հայ: Համառուսական Սահմանադիր ժողովը չգումարեցաւ, որովհետեւ նոյն ատենները Մոսկուայի եւ Բետրոկրատի մէջ յաղթանակեց Հոկտեմբերեան Պրոլետարական Մեծ Յեղափոխութիւնը, որը թոյլ չտուաւ որ պուրժւական հաստատութիւն մը, համառուսական Սահմանադիր ժողովը, գումարուի: Անդրկովկասը չուզեց ճանչնալ Խորհրդային իշխանութիւնը եւ հաւատարիմ մնալով Բերինսքիի կառավարութեան, Կոմիսարիատը շարունակեց կառավարել Անդրկովկասը արդէն տապալւած կառավարութեան մը անունով: Չմոռնանք ըսելու, որ այդ ատեն Թրքահայաստանը զրեթէ ամբողջովին զրաււած էր ուս զօրքերու կողմէ:

Թէ ի՛նչ եղաւ Հոկտեմբերեան Յեղափոխութեան դիրքը հայկական հարցի եւ Հայաստանի նկատմամբ, դայն կրնանք դատել Լենինի պատմական նամակէն, ուղղւած հայ ժողովուրդին.

«Խորհ. Ռուսաստանի ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը կը յայտարարէ հայ ժողովրդին թէ Ռուսաստանի բանւորներու եւ գիւղացիներու կառավարութիւնը պիտի պատգամէ Ռուսիայէն զրաււած Տաճկահայաստանի հայերու իրաւունքը, ազատօրէն որոշելու իրենց ճակատագիրը, նոյնիսկ մինչեւ կասաբեալ անկախութիւնը:»

(1) Յ. Քաջագունի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Աճելիք Զուցի Ալլելու:»

«Ժողովխորհր կ'ընդունի թէ այս իրաւունքին իրագործումը սա պայմանով միայն կարելի է, որ հայ ժողովուրդին ազատօրէն արտայայտելու համար շարք մը անհրաժեշտ երաշխաւորութիւններ ձեռք առնելին: Ժողովխորհը հետեւեալ պայմանները անհրաժեշտ կը դատէ որպէս նախապատրաստական երաշխաւորութիւն:

Յօդ. 1. — Ռուսական զօրքը պէտք է պարպէ Տաճկահայաստանը եւ անմիջապէս կազմել հայկական ազգային միլիցիա, Տաճկահայաստանի մէջ կեանքի եւ ինչքի ապահովութիւնն երաշխաւորելու համար:

Յօդ. 2. — Հայ փախստականներու, ինչպէս նաեւ զանազան երկիրներու մէջ ապաստանած հայ զաղթականներու վերադարձը դէպի իրենց հայրենիքը պէտք է ապահովել առանց խոչնդոտի:

Յօդ. 3. — Պատերազմի ընթացքին թուրք կառավարութեան ձեռքով Տաճկաստանի ներքին կողմերն աքսորւած հայերու առանց որեւէ արգելքի դէպի Տաճկահայաստան վերադարձը պէտք է ապահովել:

Ժողովխորհը քուրճ պատկերակներուն հետ ունեցալիք խաղաղութեան բանակցութիւններու ատեն պիտի պնդէ այս պայմանին վրայ:

Յօդ. 4. — Հայաստանի մէջ առժամեայ հայկական կառավարութիւն մը պիտի հաստատուի, կազմւած հայ ժողովրդի պատգամաւորներէն, որոնք պէտք է ընտրուին ժողովրդապետական սկզբունքներով:

Միւս կողմէ, Ստեփան Շահումեան, որ կովկասեան գործերու առժամեայ արտակարգ կոմիսար նշանակւած է, ամէն կերպ աջակցութիւն եւ օժանդակութիւն ցոյց պիտի տայ սանկահայերուն 2-րդ եւ 3-րդ յօդւածներուն գործադրումն իրականացնելու, ինչպէս նաեւ կազմելու խառն յանձնախումբ մը, որուն պաշ-

տօնը պիտի ըլլայ ուսական զօրքի ետ քաշելու
թւականն որոշել եւ միջոցներ ձեռք առնել առաջին
յօդւածի տրամադրութեան համաձայն: Տաճկահայաս-
տանի աշխարհագրական սահմանները պէտք է որուից
հայ ժողովրդի դիմուկբասական հիմունքներով ընտրւած
պատգամաւորներու ձեռքով, համաձայնութեամբ սահ-
մանազխի վիճելի գաւառներու մահմետական եւ այլ
բնակիչներու եւ կոմիսար Ստեփան Շահումեանի:»

1918 Յունւար 14 Խորհրդային Ռուսաստանի
Ժողկոմխորհի նախագահ՝
Վ. Ի. Լենին

Թէ ինչո՞ւ վերոյիշեալ պայմանները չիրականա-
ցան, հարց տանք ա՛յն դաշնակ շէջերուն, որ մեր-
ժեցից միջամտութիւնը (ի հարկէ հայ խոշոր պուր-
ժւաներու եւ անգլիական զօրավարներու ճնշումին
տակ) բանւորներու եւ զիւղացիներու «մէկ օրէն միւսը
տապալելու դատապարտւած»... (?) կառավարու-
թեան, եւ անգլիացիներու հրամանով սպաննել տւին
հայ ժողովուրդի հանճարեղ զաւակը՝ լիազօր կոմի-
սար Ստեփան Շահումեանը...

Լսենք նաեւ Լէօն.

«1918-ի սկզբից ստեղծուեց ի մի իրականութիւն,
որ կարծես հայ ազգաբնակչութեան կէս դարեան
երազի կատարումը պիտի լինէր: Հայկական կոչւած
վեց վիլայէթները գրեթէ ամբողջովին մաքրւած էին
թիւրք զօրքերից եւ իրապէս գտնուեց էին հայ ազգա-
յին զօրամասերի ձեռքին: Ոչինչ չէր պակասում այդ
երկրի պաշտպանութեան համար: Ռուսական բանակը
թողել էր այնտեղ անհատնում զէնքեր, թնթանօթներ,
ռազմամթերք, ուտելիք, մի խոսքով՝ ամէն բան, ինչ
հարկաւոր է մի բանակի՝ իր դիրքերը երկար ժամա-
մանակով պաշտպանելու համար: Ամէն ինչ կար լի ու

առատ. ազատութիւն եւ անկախութիւն որոնող մի
ժողովրդի համար, այսպիսի պատեհութիւն դարերով
չի ծնուում: Բայց այս պատեհութեան առջեւ ծառայ-
նում չը անյաղթելի արգելքը, որ միշտ արհամարել չը
թիւրքահայ յեղափոխութիւնը՝ կարծելով նրան փո-
խարինել հաշան փչանութեամբ:»

«Այդ վիթխարի արգելքը հայկական իրականու-
թիւնն էր. հայ ժողովուրդի բւական նւազութիւնն էր,
որ այնքան սարսափելի հարւածներ էր կրել 1915-ին
խելացնող ապստամբութիւնների հետեւանով: Ամէն
ինչ առատ էր, ՊԱԿԱՍՈՒՄ է՛ր գլխաւորը — ՄԱՐ-
ԴԷ:» (1)

Ինչպէս վերը ըսւածներէն յստակ կերպով կը տես-
նւի, Հսկտեմբերեան Յեղափոխութիւնը, հաւատարիմ
իր վեհ սկզբունքներուն, հայ ժողովուրդին տւաւ
ինքնորոշման իրաւունքը եւ ուզեց իր եղբայրական
աջակցութիւնը բերել անոր: Բայց առաջին անգամ
ըլլալով «հայ ազգային դատի ղեկավար կուսակցու-
թիւնը» խորապէս զգաց թէ ի՛նչպիսի ցնորական եւ
խայտառակ քաղաքանութեան մը հետեւելով, հայ
ժողովուրդը բերած է այնպիսի վիճակի մը, որ ամե-
նահիանալի առիթէն իսկ չէր կարող օգտուիլ իր ազգա-
յին ազատագրութիւնը ձեռք ձգելու համար: Տեսնելով
հանդերձ այս տխուր իրականութիւնը, հայ ժողովուր-
դի ինքնակոչ «ղեկավարները» արգելք հանդիսացան
որ Խորհրդային Ռուսիոյ եղբայրական աջակցութիւնը
ազատէ հայութիւնը այս անել կացութենէն. որովհե-
տեւ Թիֆլիսի դաշնակ պիւրոյին աւելի կարեւոր էր
Կովկասի նաւթի շուկան Խորհուրդներու իշխանու-

(1) Լեօ, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղա-
փարաբանութիւնը», Բ. Հասոր:

Թեան ձեռք չտալը, քան հայ ժողովուրդի ազատութիւնը...

Պիւրոն որոշեց զօրակոչ յայտարարել. բայց բոլոր յայտարարութիւնները անպատասխան մնացին: Արդէն Թրքահայաստանը պարպւած էր հայերէ, իսկ Կովկասի մէջ գտնւողներն ալ, կէս սովամահ, հաւատք չունէին դաշնակցական ղեկավարութեան վրայ. տեսած էին անոր ապիկարութիւնները Վանի ապստամբութեան, Վասպուրականի յուլիսեան խայտառակ նահանջին եւ կամաւորական խումբերու արշաւանքներու ընթացքին: Փաստօրէն գոյութիւն ունեցող անկախութիւնը պաշտպանելու անկարող կ'զգար ինքզինք հայ ժողովուրդը, որովհետեւ դեռ երէկ «անկախութեան» համար ի զուր մէկ միլիոնէն աւելի զոհ տւած էր եւ այսօր ինքզինք բարոյապէս եւ Ֆիզիքապէս ընկճւած եւ յուսալքւած կ'զգար: Արդիւնքն այն եղաւ, որ Ազգային Խորհուրդի կամ Անդրանիկի զօրակոչներուն պատասխանեցաւ չափազանց խղճալի եւ նոյնիսկ ծիծաղելի կերպով: Զանազան կազմակերպութիւններ, խումբեր, անհատներ նամակով կամ հեռագրով իրենք զիրենք Ազգ. Խորհուրդի «տրամադրութեան տակ» կը դնէին, բայց ոչ ոք տեղէն չէր շարժեր: Նոյնիսկ բանակի զինուորները ճակատ մեկնիլ չէին ուզէր, այլ միայն

«Գնանք ընկերներ դէպի Տանկաստան

Զարդենք թիւրքերին փրկենք Հայաստան
երգելով... բաղնիք կ'երթային:» (1)

Ու պատահեցաւ ինչ որ անխուսափելիօրէն պէտք էր պատահեր: Թրքական բանակը վերակազմւած եւ նոր ուժերով կազդուրւած յառաջ կ'անցնէր եւ կ'առնէր կարճ ժամանակի մէջ էրզրումը, յետոյ Կարսը, մէկ խօսքով, անց որեւէ դիմադրութեան

(1) Լեռկաւսար, «Ազգային Ալբեկնարան»:

հանդիպելու ամբողջ Թրքահայաստանը կը վերագրաւէր: Այս դէպքերը տեղի կ'ունենային 1918-ի ապրիլին:

Կովկասի Կոմիսարիատը, Քերենսքիի ժամանակաւոր կառավարութեան անկումէն յետոյ, իր ոտքի տակի հողը կորսնցնելով՝ իշխանութիւնը յանձնեց Անդրկովկասեան Սեյմէն (վրացերէն՝ խորհրդարան) լիազօրւած կառավարութեան: Սեյմը կամ Անդրկովկասեան Խորհրդարանը՝ կազմեցին Համառուսական Մահմանադիր ժողովին համար ընտրւած պատգամաւորները, եռապատկւած թւով, հետեւեալ կերպով. Մենշեւիկներ՝ 36, Մուսավաթ՝ 30, Հ. Յ. Դաշնակցութիւն 27 տեղ: Յատկանշական կէտ մըն է այն՝ որ Սեյմի մէջ հայ ժողովուրդի ուրիշ եւ ոչ մէկ խաւերէն ներկայացուցիչ կար, բացի դաշնակցականներէ, որոնք կը ներկայացնէին Անդրկովկասի հայ պուրժւաները: Սեյմը իր առաջին նիստը ունեցաւ Թիֆլիսի մէջ, 1918 փետրվար 10-ին եւ Անդրկովկասը «Ռաւկավար (դեմոկրատական) Դաշնակցային Հանրապետութիւն» յայտարարեց: Բայց «Հանրապետութիւնը» կը շարունակէր պաշտօնապէս մնալ Ռուսաստանի անբաժան մաս:

Ինչպէս վերը բոնք, ռուսական բանակին հեռանալէն եւ հայկական ուժերու չզոյութենէն խրախուսելով, Թրքական բանակը սկսած էր վերագրաւել իր կորսնցուցած վայրերը: Մարտի սկիզբները Սեյմը ընդունեց Թուրքիոյ կողմէ առաջարկւած զինադադարը եւ խաղաղութեան բանակցութեանց սկսելու համար իր պատուիրակները ղրկեց Տրապիզոն: Դաշնակցական խմբակը յաջողեցաւ մտցնել Սեյմի պահանջներուն մէջ նաեւ Թրքահայոց հարցը, որ ձեւակերպւած էր սապէս.

«Թիւրքիան տեղ էր ստանում իր այն բոլոր հո-

դամասերը որոնք գրաււած էին ուռաներից 1914-ից յետոյ եւ տալիս էր հայերին աւստրո-ուկրա (ինքնավարութիւն) քրեական պետութեան քաղաքացիական մեջ:» (1)

Բայց Թուրքիան թոյլ չտուաւ ո՛չ մէկ խօսք ընել հայկական ինքնավարութեան մասին, առարկելով թէ այդ իր գործերուն խառնելի պիտի նշանակէր, եւ սպառնաց վերջ տալ բանակցութեանց եթէ անդրկովկասեան պատուիրակները յամառէին պնդելու այդ առաջարկը: Ու անդրկովկասեան պատուիրակները լռեցին... Տրապիզոնի, մօտ մէկ ամիս տեւող, բանակցութիւնները ո՛չ մէկ եզրակացութեան յանգեցան, որովհետեւ Թուրքիան կը պնդէր թէ իր եւ Անդրկովկասի սահմանները արդէն ճշդւած էին Պրեսթ-Լիթովսկի դաշնագրին մէջ (1918 փետրվ. 23) եւ թէ ինք եկած է միայն բարի դրացիական կապեր հաստատելու Անդրկովկասեան Հանրապետութեան հետ: Իսկ եթէ այս վերջինը չէր ուզէր ճանչնալ Պրեսթ-Լիթովսկի դաշնագիրը եւ նոր դաշնագիր մը ստորագրել կ'ուզէր, պէտք էր որ նախապէս յայտարարէր իր անջատումը Ռուսաստանէն:

Բանակցութեանց տեւողութեան ընթացքին թրքական ուժերը իրենց յառաջխաղացումը կը շարունակէին եւ երբ 1918 ապրիլ 1-ին անոնք Պաթում մտան, Սեյմը ետ կանչեց իր պատուիրակները եւ Տրապիզոնի բանակցութիւնները խզեցան: Սեյմի մէջ այն ատեն ծնունդ առին անհամաձայնութիւններ եւ տարակարծութիւններ: Մուսավաթը բացէ ի բաց յայտարարելու սկսած էր թէ ինք թրքական օրիանացիայի (քաղաքական ուղղութիւն) եւ Անդրկովկասի Ռուսաստանէն անջատման կողմնակից էր, Մենշելիկներու

(1) Լեօ, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը» Բ. Հատր:

մէջ ալ գերմանօ-թրքական հոսանքը յաղթելով ուսական հոսանքին, վրացիներն ալ պատրաստակամութիւն յայտնեցին ամենամեծ զիջումներով թուրքիոյ հետ հասկացողութեան գալու:

Դաշնակցութիւնը կ'ուզէր ո'չ Ռուսիայէն անջատուիլ, ո'չ ալ թուրքերու հետ համաձայնիլ, այլ Պրեսթ-Լիթովսկի պայմաններն ալ մերժելով շարունակել կ'ուզէր... պատերազմիլ թուրքերու հետ: Բայց ան կարող չէր Անդրկովկասի բաղդը որոշելու: 1918, ապրիլ 9-ին Սեյմը, Մենշևիկկոստավաթ մղումով հանդիսաւորապէս յայտարարեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանէն: Դաշնակցութիւնն ալ կամայ ակամայ միացաւ այս որոշման, որովհետեւ եթէ հակառակ արտայայտէր, անմիջապէս Անդրկովկասեան Դաշնակցութիւնը պիտի քանդէր: Թէ ի'նչ արժէք կը ներկայացնէր «բացարձակ անկախութիւն» պահանջող պարոններուն համար Անդրկովկասեան Դաշնակցութեան գոյութիւնը, զայն հարցնենք Յ. Քաջազնունիին.

«Մենք ամենքից աւելի կարիք ունեինք Անդրկովկասեան Դաշնակցութեան, չէինք ուզում որ նա քանդուի, որովհետեւ եթէ նա քանդէր, վրացիներն ու ադրբեջանցիները իսկոյն պիտի հաշտէին թուրքերի հետ ու թողնէին մեզ միակ, երես առ երես Վեհիպ Բաշայի դէմ:» (1)

Ընթերցող, լաւ միտքդ պահէ՛ այս «կարիք ունեինք»ը, որովհետեւ քիչ յետոյ անով պիտի չափես այն արժէքը որ ունէր մայիս 28-ի «անկախութիւնը» նոյն այդ «անկախութեան» հեղինակներուն համար...

Երբ Կարսն ալ ինկաւ թուրքերուն ձեռքը, Սեյմը սրոշեց Տրապիզոնի ընդհատուած բանակցութիւնները

(1) Յ. Քաջազնունի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Անեղիք Զուցի Այլեւս:»

վերսկսիլ Պաթումի մէջ (1918 մայիս 6), այս անգամ ընդունելով Պրեսթ-Լիթովսկի բոլոր տրամադրութիւնները: Բայց թուրքերը փոխէր էին արդէն լեզունին եւ Պրեսթ-Լիթովսկի դաշնագիրը զիրենք չէր բաւականացնէր այլեւս, որովհետեւ Տրապիզոնէն յետոյ նոր արիւն թափած էին եւ պէտք է հատուցում ստանային:

Դեռ մէկ ամիս առաջ Պրեսթ-Լիթովսկի պայմանները մերժելու որոշում տւող Դաշնակցական Խորհուրդին միակ ու ամենամեծ իղծն էր հիւսայ սոյն պայմանագրութեան գործադրութիւնը: Իսկ յաղթական թուրք բաշաները, իրենց ինքնահաւան եւ քաղաքականապէս մանուկ հակառակորդին իղծերը ճանչնալ չուզելով կը յառաջանային դէպի արեւելք եւ արդէն մայիս 15-ին Ախուրեանը (Պրեսթ-Լիթովսկի մէջ որոշւած սահմանագիծ) անցնելով, մի քանի ժամէն Ալեքսանտրապոլը զրաւած՝ կը յառաջանային դէպի Ղարաբիլիսա:

Անդրկովկասի եւ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը վտանգի տակ էր, իսկ Պաթումի բանակցութիւններն ալ դեռ ո՛չ մէկ ելքի յանգած էին: Սեյմը մէկ օրէն միւսը քանդելու վտանգին տակ կը գտնէր: Վրացիները հայերը աւելորդ բեռ կը նկատէին արդէն, իսկ Մուսափաթին ալ միակ բաղձանքն էր օր առաջ Դանձակի մէջ միանալ յաղթական թուրք ուժերուն եւ այսպէս ետ գրաւել Պաբուն, որը խորհրդային իշխանութիւն յայտարարած էր արդէն 1918 ապրիլ 25-ին:

Վերջապէս հասաւ դժբախտ օրը, դժբախտ ու չսպասւած Դաշնակցութեան կողմէ... Մայիս 26-ին (1918), Սեյմը լուծւած յայտարարեց Անդրկովկասեան Դաշնակցութիւնը եւ նոյն օրն իսկ Վրաց Ազգային Խորհուրդը յայտարարեց Վրաստանի «անկախութիւնը»:

Մայիս 27-ին, Խան-Խոյսքին, Մուսավաթի անունով յայտարարեց Ադրբեջանի «անկախութիւնը»: Կարգը եկած էր Հ. Յ. Դաշնակցութեան: Ի՞նչ պէտք էր ընել: Անդրկովկասեան Դաշնակցութիւնը, որուն այնքան կարիք ունէր Պիւրոն, հակառակ իր կամքին լուծւած եւ գոյութիւն ունենալէ դադրած էր արդէն: Յեյմը յայտարարած էր Անդրկովկասի, ապա ուրեմն Հայաստանի ալ անջատումը Ռուսաստանէն: Հայ պուրժւազիի շահերուն հարազատ թարգմանը հանդիսացող Դաշնակցութիւնը, որ պաշտպանած է Պաքուի հայ նաւթատէրերը եւ գործարանատէրերը բոլոր գործադուլներու ժամանակ եւ նոյնիսկ հալածած է սոցիալիստ բանւորները» (1) դէմ էր ազգային անջատ պետութիւններու կազմութեան, որովհետեւ «անկախ» Վրաստանի ու «անկախ» Ադրբեջանի կազմութեամբ Թիֆլիսն ու Պաքուն, ուր կեդրոնացած էին հայ պուրժւաներու շահերը, ձեռքէ կ'ելլէին: Ուղեկորոյս ու առանձնացած հայ Ազգ. Խորհուրդը, մայիս 27-ին իսկ, Պաթում, թուրքերու մօտ բանագնացներ ղրկեց: Թուրքերը, բանակցութեանց սկսելու համար, պայման դրին որ նախ Հայաստանի անկախութիւնը հռչակուի: — Միւս կողմէ վրացիները հայ Ազգ. Խորհուրդին Երեւանի ճամբան կը ցուցնէին: Պէ՛տք էր քաջութիւնն ունենալ թուրք բաշաներու կողմէ ՊԱՐՏԱԴՐԻԱԾ, Մենշելիկներու եւ Մուսավաթին «շաւաճանութեան» արդիւնքը եղող «անկախութեան» ձեռք երկարել... Թիֆլիսի եւ Պաքուի հայ խոշոր պուրժւաները ի՞նչպէս այս երկու մեծ արդիւնաբերական կեդրոնները ձգելով պիտի երթային աւերակ Հայաստանի ցամբած երակները ծծելու... Միթէ՞

(1) Կարիմեան, «Իմպերիալիստական Պաքուական եւ Հայաստան»

իրենց համար աւելի կարելոր չէին Պարուի նաւթն ու
Թիֆլիսի վաճառականութիւնը, քան հայ ժողովուրդի
ազատութիւնը...

Մենշելիկներուն Գերմանիան հրամայած էր «ան-
կախութիւն» հռչակել եւ Մուսավաթին՝ Թուրքիան:
Իսկ Դաշնակցութեան ո՞վ պիտի հրամայէր արդեօք:
Ո՞ր մէկ «ազատարար քեռին» պիտի հասնէր արդեօք
Դաշնակցութիւնը այս անել կացութենէն դուրս շը-
պրտելու համար: — Եւ ահա, «Բագլի մօտերը մի...
հայկական օջախ հիմնել փափաքող» Անգլիան օգ-
նութեան կը հասնէր եւ Դաշնակցութեան կը հրամա-
յէր «ըմպել այս դառն քաժակը քրիտանական իմպե-
րիալիզմի ֆինանսական խանգարւած աղիքնե՞ր...
նաւթով մաքրելու համար:» Ի հարկէ, «հայ-քրիստոնե-
այ» ու իմպերիալիստական լաքէ Դաշնակցութիւնը
չպիտի մերժէր «քրիստոնեաներու պաշտպան» քրի-
տանական իմպերիալիզմին առաջարկը...

Ահա այս տեսակ պատմական անողոք հարկա-
դրանքներու տակ էր որ ճարահատ՝ Թիֆլիսի մէջ,
1918 մայիս 30-ին (եւ ո՛չ թէ 28-ին), Հայոց Ազգ-
կորհուրդը հրատարակեց հետեւեալ յայտարարու-
թիւնը.

Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լու-
ծուժով եւ Վրաստանի ու Ադրբեջանի անկախութեան
հռչակուժով ստեղծւած նոր դրութեան հանդէպ՝ Հա-
յոց Ազգային կորհուրդը ԻՐԵՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԱՆ-
ԻՐԿՈՎԿԱՍՏԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԻԱՌՆԵՐԻ ԳԵՐԱԳՈՅՆ
ԵՒ ՄԻԱԿ ԻՇԵԱՆՈՒԹԻՒՆ: Որո՞ւ ծանցակէիս պա-
հառներով բողոքելով մօտիկ օրերը կազմել հայոց ազ-
գային կառավարութիւն՝ Ազգային կորհուրդը ժամա-
նակաւորապէս ստանձնուժ է կառավարական բոլոր
Ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական
եւ վարչական դեկը վարելու համար:»

Թիֆլիս, 1918 մայիս 30 ՀԱՅՈՑ Ա.ԶԳ. ԽՈՐՀՈՒՐԴ

Ի՞նչ կ'ըսէ սոյն յայտարարութեան մասին անոր հեղինակներէն մին՝ Ս. Վրացեան. — «... Ազգային Խորհուրդն արաւ վճռական քայլ եւ մայիս 30-ին հրատարակեց, աւելի արտաքին նկատման հետ, քան իր յօժար կամով, հետեւեալ (վերոյիշեալ) յայտարարութիւնը, որը թէեւ իսկական առումով ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌԶԱԿՈՒՄ ԶԷՐ, բայց ղէպքերի բերումով դառնաւ այդպիսին:» (1)

Այդ «արտաքին ճնշումներն» էին, ինչպէս զիտենք, Անդրկովկասեան Դաշնակցութեան կազմալուծումը, թուրք բաշաներու հարկադրանքը եւ անգլիական զօրավարներու հրամանը: Վրացեանն ու բոլոր Վրացեանները, որ քաջութիւնը կ'ունենան երբեք իրականութիւնը խոստովանելու գրքերու մէջ, ինչո՞ւ վեհանձնութիւնը չեն ունենար նոյն իրականութիւնները մամուլի էջերէն եւ բեմերէն յայտարարելու:

Այս տարօրինակ «անկախութեան» յայտարարութիւնը կը խուսափի Հայաստան բառէն եւ անոր տեղ կը գործածէ «անդրկովկասեան հայկական գաւառներ»: Նոյն յայտարարութեան մէջ «անկախութեան» խօսքն անգամ չըլլար, այլ կ'ըսուի. «գերագոյն եւ միակ իշխանութիւն»: Այսօր բացայայտ է թէ սոյն խուսափողական բառերու ետին ի՞նչ մութ հաշիւներ ու մեքենայութիւններ ունէին կովկասահայ պուրժւաները եւ անոնց պիտակը հանդիսացող «մարտական» կուսակցութիւնը:

Թուրքիան, որ կը վախնար թէ մի գուցէ վաղը յաղթական Համաձայնականները գան եւ Հայաստանին տալու պատրուակով իր երկրէն աւելի մեծ հողամասեր անջատեն, առաջին պետութիւնը եղաւ որ

(1) Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւնը:»

պաշտօնապէս ճանչցաւ արդէն իր կողմէ պարտա-
դրւած հայ «անկախութիւնը» տալով հայերուն
«400.000 բնակչութիւն ունեցող մօտ 9.000 քառակու-
սի բիլլօմէր սարածութիւն ունեցող մի լեռնոտ, մե-
ծագոյն մասամբ անպտուղ երկիր, որ հազիւ բաւա-
կան լինէր հայ ժողովուրդի գերեզմանը դառնալու:» (1)
Ինքնին շատ լաւ կը հասկցւի իսկական արժէքը այն
հայ «անկախութեան» որ անմիջապէս կը ճանչցւի
թուրք իթթիհատական կառավարութեան կողմէ...
Եւ ծիծաղելի է, որ սոյն դժբախտ, տխուր ու պար-
տադրւած «անկախութեան» տխրահոլակ հեղինակնե-
րը կը յանդգնին դեռ քննադատելու Խորհ. Հայաստանի
աշխարհագրական տարածութիւնը եւ անոր անկա-
խութեան ու ազատութեան արժէքը...

Ընթերցող, ահա «մայիս 28-ի Հայաստանի ան-
կախութիւնը». (պէտք էր ըսել. մայիս 30-ի անդրկով-
կասեան հայկական գաւառների գերագոյն եւ միակ
իւսանութեան յայտարարութիւն) պատմութեան շրջա-
մակողմանի լոյսին տակ: Այժմ քեզի կը մնայ առողջ
տրամաբանութեամբ մօտենալ վերոյիշեալ փաստե-
րուն եւ վաւերաթուղթերուն ու յետոյ քու անաչառ
վճիռդ տալ «մայիս 30-ի անդրկովկասեան հայկական
գաւառների գերագոյն եւ միակ իշխանութեան յայ-
տարարութեան» մասին:

Դաշնակցական խաբւած շարքային կամ համա-
կիր ընկեր, ահա իրականութիւնը այսպէս ասած
«մայիս 28-ի Հայաստանի անկախութեան», որուն կը
խնկարկես ամէն տարի իբր հայ ազգի ազատագրու-
թեան օրը, որուն պատմական իսկութիւնը յայտնող-
ները կ'անարգես, կը հարւածես եւ կ'սպաննես. որով-

(1) Լեօ, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղա-
փարաբանութիւնը», Բ. Հասոր:

հետեւ այդ դժբախտ «անկախութիւնը» եւ նման արկածախնդրութիւններ յղացող տասնեակ մը կովկասահայ շէֆերդ մոլորեցուցած, թունաւորած են քեզ իրենց «մարտական» ու աթոռամուշկան տխուր զաղափարարանութեան հաշիշովը: Այդ տասնեակ մը քուրմերդ կը զործեն այս ոճիրը զիտնալով հանդերձ թէ ի՞նչ կ'ընեն, որովհետեւ անոնց ապրուստի միակ միջոցը դուն ես, որովհետեւ զանազան «ֆօնտերու», «խաչերու» եւ «համագգայիներու» համար տւած, ընտանիքիդ հացին տրւելիք, լումաներդ անոնց շոյլ ու զեղխ ծախքերուն պիտի ծառայեն: Վերջապէս՝ որովհետեւ քեզ շահագործելով, բու արիւնդ տգրուկի պէս ծծելով է որ կը պարարտանան այդ վամբիր «ex-ministre»ները:

Սթափի՛ր, դաշնակցական խաբւած աշխատաւոր, գետակցի՛ր թէ ի՞նչ կ'ընես այսօր «ազգի» «հայրենիքի» եւ «անկախութեան» անունով եւ խորհիր թէ ի՞նչ պէտք է ընես վաղը:



«400.000 բնակչութիւն ունեցող, մօտ 9.000 քա-
նակուսի ֆիլօմէքր սարածութիւն ունեցող մի լեռնոս,
մեծագոյն մասամբ անպսուղ երկիր:»

ԼԷՅՕ

«Իեղ չկար, սնունդ չկար, վառելիք չկար, սպի-
նակեղէն չկար, եւ մարդիկ մեռնում էին անմոռնջ
հարիւրներով, հագարներով: Ժողովուրդը սպառւում էր
վառւող մոմի պէս:

«Սովի եւ համաճարակի հետ, երկրում խախտած
էր եւ ապահովութիւնը... հասարակական չարիք էր
դարձել, այսպէս կոչւած «մավզերիգը...»

«Վեց ամսւայ ընթացքում, սովից եւ հիւանդու-
թիւններից, Հայաստանում ՄԵՌԱԻ ՄՕՏ 180.000 ՀՈԳԻ:»

Ս. ՎՐԱՅԵԱՆ

«Զօրֆերը որոնք պիտի պաշտպանէին ժողովուրդի՞ն
արտաքին թշնամիների առաջ, իրենք կը դառնան
ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹՇՆԱՄԻՆՆԵՐ...:»

ԶՕԲ. ՇԱԽՎԵՐՏԵԱՆ (Պարեռագ. մ. նախարար)

«Պիտի հասնի՞ վերջապէս մի ԶՕԲԵՂ, ԲԱԶՈՒԿ հո-
րերից հացը հանելու եւ գոմերից անասունները եւ
բաշխելու կարիքաւորներին: Միթէ սեփականութիւնը
բա՞նկ է մարդկային կեանքից:»

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

«... կը վաւերացւի թէ օսմ. սահմանին մէջ հայ
մեծամասնութիւն ունեցող ո՛րեւէ հողամաս չկայ:...
Երեւանի հանրապետութիւնը յանձն կ'առնէ ո՛րեւէ գին-
ւորական կազմակերպութիւն չ'արտօնել... Թուրքիոյ
հակակռօնի սակ պահել երկարուղիներն ու հաղոր-
դակցութեան միջոցները...:»

Ալեքսանտրապոլի Դաշնագիր

ԻՆՉ ՏԻԱԻ «ԱՆԿԱՒՈՒԹԻՒՆԸ» ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

1918 նոյեմբեր 11-ին համաշխարհային պատերազմը կը վերջանար եւ ընդհանուր զինադադար կը հռչակուէր:

Գերմանական զօրքերը շուտով հեռացան Վրաստանէն եւ Թրքական ուժերն ալ իրենց 1914 ի սահմանները քաշուցան: «Ճնշւած ու փոքր ազգերու ազատութիւն տալու համար» սկսւած պատերազմը կը վերջանար «ազատարարներու» յաղթանակով... Նոյեմբերի վերջերը Պաթում ցաւաք կ'իջնէին արդէն անզլիական զինւորները - մեր «դաշնակիցները»: Մեծ յոյսեր սնուցանելու սկսան հայ ժողովուրդի ինքնակոչ «ղեկավարները». անզլիացիները աւելի բարեացակամ պիտի գտնուէին իրենց «փոքր դաւենակից» ին հանդէպ: — Պատահեցաւ ճիշդ հակառակը. անզլիական իմպերիալիզմը աւելի բարեացակամ գտնեցաւ զեռ երէկ Գերմանիոյ զիրկը նետւող Վրաստանին, ու Թուրքին յաղթանակը ծափահարող Ադրբեջանին՝ քան հայ ժողովուրդին հանդէպ, որովհետեւ Ադրբեջան ունէր Պարուի նաւթահորերը, եւ Վրաստանն ալ այդ նաւթը Սեւ ծով հոսեցնելու ճամբան էր... Իսկ ի՞նչ ունէր Հայաստանը իմպերիալիստական այս գազանին աստորժակը զրգող — ո՛չինչ, եթէ ոչ տկարի յատուկ օժանդակութեան կարիք:

«Ի հարկէ գանգատեցինք դառնօրէն անզլիացիներից. ասինք, ապերախտ են, ու սրտերնիս թեթեւ»

ցուցինք, այլեւս չի որոնեցինք այդ ապերախութեան աղբիւրները»: (1)

✕ «Զի որոնեցին այդ ապերախութեան աղբիւրները» եւ Ահարոնեանը, «երբ ալեկոծ ծովին վրայ... Դեռ իմ յոյսը չեմ կտրի — երգելով», դարձեալ գնաց այդ «ապերախտներուն» քով, ներկայանալու Վերսայլի Խորհրդաժողովին: «Հանրապետութեան Պատւիրակութեան նախագահը», 1919 փետրվարին սոյն Խորհրդաժողովին ներկայացուց յուշագիր մը որով կը պահանջէր Կիլիկիայէն մինչեւ Սեւ եւ Կասպից ծովերը երկարող բոլոր հողամասերը անջատել Թուրքիայէն եւ այսպէսով ստեղծել «Ծովից ծով, Միացեալ եւ Անկախ Հայաստան» մը: Ի հարկէ այս «խանդավառ մթնոլորտին» մէջ մարդ մտքէն իսկ չէր անցըններ թէ ինչո՞վ պիտի լեցւէր այդքան լայնատարած երկիր մը եւ ո՞վ պիտի պաշտպանէր անոր հազարաւոր քիլոմէթրներով սահմանները: Զինուորութեան տարիք ունեցող բոլոր հայերը պիտի բաւէ՞ին արդեօք այդ գործը կատարելու... ո՛չ: Ի հարկէ բոլոր յոյսերը նորէն ու նորէն դրւած էին «դառնակից» Եւրոպայի վրայ:

Մինչեւ որ Ահարոնեան «յոյսը չի կտրելով» «Ծովից-ծով»ը ձեռք անցնելու ետեւէն ըլլայ, մենք նախինք թէ ինչե՛ր տեղի կ'ունենային «անկախ» Հայաստանի մէջ:

1918 դեկտեմբերի ամբողջ տեւողութեան ընթացքին տեղի ունեցան հայ-վրացական կռիւները, սահմանային վէճերու հետեւանքով, որոնք վերջ գրտան 1919 յունւար 7 ին անգլիական զօրքերու միջամտութեամբը: «Անկախութեան» առաջին ամիսներէն սկսելով նորածին «անկախ» դրացի պետութիւնները

(1) Յ. Քաջազնունցի, «Հ. Յ. Դառնակցուրիւնը Անեւ լիք Զունցի Ալլելու»:

սկսած էին նորէն հոսեցնել հազիւ ցամբած արիւնը, փոխանակ «հազար ու մի բուժելու ցաւ ունեցող» ժողովուրդներուն հանդարտութեան եւ կեանքի բարւոքման մասին խորհելու:

«Եւ պատերազմեցիք Վրաստանի հետ, որի հետ սիրտօրէն դաշնակցելու ամէնից մեծ կարիք ունէինք: . . . Եւ անկախ՝ Վրաստանի բռնած շիրքից, որ անվիճելիօրէն դատապարտելի էր, քիչ դեր չի խաղացել մեր սեփական ապիկարութիւնը, մեր քաղաքական տեսութիւնը եւ պետական կեանքը վարելու տեսութիւնը. . . Պաշտօնապէս Ատրբեջանի հետ պատերազմ չենք ունեցել, բայց փաստօրէն կուել ենք Ղարաբաղում ու յանախակի ընդհարումներ ենք ունեցել Ղազախում: Ապա՛ երկրի ներսը՝ մի շարք արիւնահեղ կռիւներ ենք ունեցել տեղական թուրք ազգաբնակչութեան հետ Աղբաբայում, Զօղում, Զանգի-Բազարում, Վէտի-Բազարում, Շարուր-Նախիջեւանում եւ Զանգեզուրում. . .»: (1)

Պատերազմ հարեւաններու հետ, արիւնահեղ կռուիւններ երկրէն ներս, ժամանակաւոր հաշտութիւն իմպերիալիստական սելիներու միջամտութեամբ. յատկանշական գծեր ազգայնամոլ «մարտական» կուսակցութեան մը, որ իրապէս տհաս է թէ քաղաքական եւ թէ պետական կեանքին մէջ:

— «Դեղ չկար, վառելիք չկար, սնունդ չկար, սպիտակեղէն չկար, եւ մարդիկ մեռնում էին անմոռնօք, հարիւրներով, ժողովուրդը սպառում էր վառուող մոմի պէս. . . : Սովի եւ համահարակի հետ, երկրում խախտած էր եւ ապահովութիւնը. . . հասարակական շարիք էր դարձել, այսպէս կոչւած «մալգերիզմը» — մալգէրով

(1) Յ. Քաջազնունի, «Զ. Յ. Դաւենակցութիւնը Աճելիք Զունի Այլեւս:»

զինւած մարդիկ շահատակութիւն էին անում նոյնիսկ մայրաքաղաքի փողոցներում եւ խաղաղ բնակչութիւնը տառապում էր նրանց ձեռքին:»

«Վեց ամսւայ ընթացքում, սովից եւ հիւանդութիւններից Հայաստանում մեռաւ մօտ 180.000 հոգի...:» (1)

«Անկախ» Հայաստանի իրական պատկերը գծւած «վարչապետ» Վրացեանի կողմէ: Բայց, պարո՞ն «վարչապետ», ձեր Բարիզի կամ Հարաւային Ամերիկայի մէջ խօսածները վերը ըսւածներուն ճիշդ հակառակն են. արդեօք վերի տողերը գրելու ատեն դո՞ւք ալ «Մոսկւայի ծախւած» էիք...

— «... Զօրքերը որոնք պիտի պաշտպանէին ժողովուրդին արտաքին թշնամիների առաջ, իրենք կը դառնան ժողովրդի թեցամիներ, երբ գժքախտ ազգաբնակչութիւնը իր իսկ զօրքի անկարգութիւններից փրկելու համար՝ պատրաստ է փախչիլ Տաճկաստան եւ ընդունիլ տաճկահպատակութիւն եւ մահմետականութիւն, միայն թէ ազատւի զօրքերի ասպատակութիւնից: (2)

Այս ժողովուրդի թշնամի «զօրքերը» եւ վերը յիշւած «մավզերխտները», արդեօք «մարտական» կուսակցութեանդ հասցուցած պտուղները չեն, պարո՞ն «պատերազմական նախարար»: Ճիշդ չէ մտածել, որ կառավարութիւն մը որ չուզէր կամ չի կրնար արգելք հանդիսանալ իր ընկեր «մավզերխտներուն» շահատակութեանց, ինքն է ժողովուրդի իրական թեցամին...

(1) Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւնը:»

(2) Պատերազմ. նախարար Զօր. Եախվերեան «Հրամանագիր թիւ 13»:

«Պիտի հասնի՞ վերջապէս մի գօրեղ բազուկ հորերից հացը հանելու եւ գոմերից անասունները եւ բաշխելու կարիքաւորներին: Միթէ սեփականութիւնը թա՞նկ է մարդկային կեանքից:» (1)

Պարո՛ն Աղբալեան, չէիր գիտեր, որ այդ գօրեղ բազուկը միայն խորհրդային սոցիալիստական իշխանութեան հաստատումը կրնար ըլլալ... Դուն, որ «լուսաւորութեան նախարար» էիր, չկրցա՞ր միւս ընկերներուդ խաւարեալ մտքերը լուսաւորել այս ուղղութեամբ: Դուն, որ 1937 մարտ 6-ին Պէյրութի մէջ «տիպար դաշնակցականի» մը մասին խօսած ատենդ, կ'ըսես. «Մենք թ'է ազգասէր, թ'է այլասէր ենք. մենք միշտ բանւոր դասակարգի հետ ենք, եւ եթէ անկախ (իմա՛ դաշնակցական Հ.) կառավարութիւն մը ունենայինք մեր առաջին գործը պիտի ըլլար սոցիալիստական կարգեր հաստատել» - չկրցա՞ր «սոցիալիստական կարգեր հաստատելու» մասին մտածել «անկախութեան» օրերուն, թէ ո՛չ, դաշնակ կառավարութիւնը երկուքուկէս տարւայ միջոցին «ժամանակ չունեցաւ այդ մասին խորհելու...»: Ի՞նչ «պարագաներու բերումով» մէկ-երկու տարիէ ի վեր սկսաք «ազգի», «ցեղի», «հայրենիքի» տեղ, «ժողովուրդի», «բանւոր դասակարգի» եւ «ընկերվարութեան» կեղծ դիմակները գործածել... Կը կարծէ՞ք, որ զանազան դիմակափոխութիւններով՝ այլեւս զիտակցութեան եկած գաղթահայութեան առջեւ պիտի կարենաք ծածկել ձեր իսկական՝ հայրենադաւի, ժողովուրդասէացի ու իմպերիալիստական ճիւղ գործակալի տխուր դիմագիծը... Տեղին չէ՞ անգամ մըն ալ կրկնել Ա. Կարինեանի նշանաւոր խօսքը Դաշնակցութեան մասին.

«Այդ, ցաւ խորամանկ կազմակերպութիւնը ՏՅ-

(1) Ն. Աղբալեան — «Յառաջ», մայիս 1920.

ՂԻՆ ՀԱՄԵՄԱՏ խնսած է պուրժուական, կամ կղերական եւ կամ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ լեզուով:»

Շարունակենք պատմական դէպքերը:

1919 մայիս 28-ին «անկախութեան» առաջին տարեդարձին հաշնակ խորհրդարանը «անկախ» Հայաստանը «Միացեալ» յայտարարեց, այսինքն գոյութիւն ունեցող հանրապետութեան սահմաններուն մէջ սեպեց բոլոր այն հողերը որոնք ենթադրաբար Վէրսայլի Խորհրդաժողովին որոշմամբ պիտի անջատւէին Թուրքիայէն եւ տրւէին Հայաստանի: Ահարոնեանի պատւիրակութեան Վէրսայլի ներկայացուցած յուշագիրը այս անգամ խորհրդարանէն պաշտօնապէս կը յայտարարւէր: Եւ Երեւանի կառավարութիւնը կ'ընէր այս յայտարարութիւնը, որպէսզի ամբողջ հայ ժողովուրդին եւ թրքահայ հարցին անունով խօսի միա'յն Հանրապետութեան պատւիրակութիւնը ղրկող «պետական» կուսակցութիւնը:

1919 Օգոստոս 1-ին բացւեցաւ Հայաստանի «պարլամենտը» որ եկաւ փոխարինելու խորհրդարանը: Հասկնալու համար թէ ի՞նչ բնոյթ ունէր «պարլամենտը», հերիք է գիտնալ որ 80 անդամներէն 72-ը միայն դաշնակացական վարժապետներ ու «գրողներ» էին:

1920 մայիս 10-ին տեղի ունեցան Ալէքսանդրապօլի մէջ համայնավարական ցոյցեր եւ ապստամբութիւններ:

«Շարժումը խեղդեց առանց մեծ դժուարութիւնների . . . բայց եւ այնպէս շատ բնորոշ է այն հանգամանքը, որ քանի մը տասնեակ բոլշեւիկ երիտասարդներ կարողացան կազմակերպել աղմկալի ցոյցեր (նոյնիսկ Երեւանում կառավարութեան քթի տակ), պրոպականտ անել զօրքի մէջ, գրաւել Ալէքսանդրաբոլում երկաթուղու կայարանը, տիրանալ զրահակիր

զնացքին... Սա ցոյց է տալիս թէ որքան քոյլ, որքան անսեղեակ եւ որքան անփոյր է եղել կառավարութիւնը»: (1)

Այս շարժումը «խեղդող, կառավարութիւնը կը կազմէին այն մարդիկ, որ այսօր քննադատել կը փորձեն թ. Հայաստանի այն վարիչները, որ 1921 Յունվար 10-ին անսեղի վեհաձեռութիւնը ունեցան միայն բանակի դաշնակցական սպաները արտրելով գոհանալու, ու վրացեաններու ազատութեան չի դպնալու, տեղեակ ըլլալով հանդերձ թէ անոնք, 1920 դեկտեմբեր 20-էն ի վեր արդէն գաղտնի աշխատանքներ կը տանէին ըմբոստութիւն պայթեցնելու համար: Նոյն մարդիկը, որ սանցարծակ ազատութիւններու կողմնակից եւ խորհրդային կարգերու բանւորագիւղացիական տիկտատուրայի կատաղի հակառակորդ են, ահա՛ թէ ի՞նչ ըրին Մայիսեան ապստամբութենէն մի քանի օր վերջ:

«Այս շարժումների հետեւանքով կամ սրանց հետ կապւած՝ տեղի ունեցաւ մի տեսակ coup d'Etat (պետական հարւած). պարլամենտական կառավարութեան փոխարինեց՝ սիլեստրական լիազօրութիւններով՝ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն (այսպէս անւանւած Բիւրօկառավարութիւն)»: (1)

Վերադառնանք Ահարոնեանին մօտ: 1920 ապրիլ 25-ին ան առաջարկեց Միացեալ Նահանգներու նախագահ Վիլսոնին ընդունիլ «Միացեալ եւ Անկախ Հայաստանի» մանսան (հովանաւորութիւնը) — ուրեք «անկախութիւնը» մանտայէն ալ պակաս բան մըն է եղեր: Սակայն Ամերիկեան Ծերակոյտը իր 1920 մա-

(1) Յ. Քաջազնունի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Անեղիք Զունի Այլեւս»:

իս 31-ի նիստին մէջ 23-ի դէմ 52 ծայնով մերժեց ընդունիլ «անկախ» Հայաստանի մանտան, որովհետեւ «Հայաստանի մէջ քարիւղ չկար»...

Վերսայլի խորհրդաժողովը որոշեց Թուրքիոյ հետ կնքել մասնաւոր դաշնագիր մը: Ու 1920 օգոստոս 10-ին, Սեւրի պալատին մէջ «յաղթական» պետութեանց ներկայացուցիչները, որոնց կարգին Ահարոնեանը, պարտադրեցին որ պարտւած Թուրքիան ստորագրէ իր մահուան դատաւճիռը եղող «Սեւրի դաւեանագրք»: Սոյն դաշնագրով Թուրքիա կը ճանչնար Հայաստանի անկախութիւնը, Վանի, Պիթիւսի եւ մասամբ էրզրումի վիլայէթներուն սահմաններուն մէջ, որոնց վերջնական «զծագրումը» կը թողէր Վիսթրին: Չափազանց մեծ հրճւանք կը պատճառէր Սեւրի դաշնարի ստորագրումը գաղթահայ պուրժւաններուն եւ մանաւանդ «մարտական» կուսակցութեան. «դաշնակտիրացուներուն համար այդ փաստաթուղթը այժմ ալ ազգային յաղթանակի խորհրդանշան է» (Ա. Կարինեան):

«... Օրւայ հերոս էր դառնում Ահարոնեանը: Գրիչը, որով նա ստորագրել էր Սեւրի դաշնագիրը, սրբութեան պէս քաղաքէ քաղաք փոխադրում էր գաղութներում:... Նորից, եւ այս անգամ աւելի ուժեղ կերպով դիւանագիտական թղթի կտորը գալիս էր խելքից հանելու հայ ժողովուրդի առաջնորդներին:... Ամէն ինչ վերջացած էր համարւում փառքի եւ յաղթանակի գազաթնակէտը թառած դաշնակցութեան»: (1)

Պատմութենէն այնքան գործնական դասեր առած հայ ժողովուրդի «քաղաքական ղեկավարութիւնը

(1) Լեօ, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը» Բ. Հատր:

ստանձնող մարտական կուսակցութիւնը» պէտք էր ջանար աւելի որոշ ու յստակ կերպով տեսնել իրականութիւնը, որովհետեւ «աւելի լաւ է գիտնալ դառն ճշմարտութիւնը, քան օրօրելի քաղցր ստերով»: (1)

Ճշմարտութիւնը կամ իրականութիւնը աս էր, որ Դաշնակցութիւնն իր ետին ո՛րչ ուղղմական ուժ ունի ստիպելու, ո՛չ ալ մարդկային նիւթ, «Սեւրի» շնորհած ընդարձակ հողերուն վրայ նստեցնելու եւ զանոնք ապահով կերպով հոն բնակեցնելու համար.

«Այս իրական ու հարկեցուցիչ փաստերի փոխարէն դաշնակցականներն նորից իրանց բնէ՛ած գիրկն առնում էին հին, անատամ ու ծթո՛ած հաւասն ու յոյսը»:» (2)

Ու պատահեցաւ անխուսափելին:

Արդէն ըսինք թէ 1918-ի վերջերը պարտւած Թուրքիան ետ քաշւած էր իր 1914-ի սահմանները եւ Կարսի նահանգը Կարս բերդաքաղաքով արդէն երկու տարի է ի վեր Հայաստանի մաս կը կազմէր: Թուրքիոյ մէջ սկսած էր քէմալական-միլլիական շարժումը, որուն միակ նպատակն էր անդամահատւած ու ոչնչացման վտանգին ենթակայ թրքական պետութիւնը վերակենդանացնել: Մինչ արեւմուտքի մէջ Քէմալը չափուելու սկսած էր յոյներուն հետ, ան կ'առաջարկէր դաւենակցական կառավարութեան խաղաղ բաճակցութեանց միվոցաւ լուծել բուրժուա-հայ հարցերը, որոնց կարգին ի հարկէ առաջին անգամ Սեւրի դաշնագրին տրամադրութիւնները: Թէ ո՞վ եղաւ 1920-ի աշնան հայ-թրքական պատերազմի իրական նախա-

(1) Ս. Վրացեան «Հայրենիք» օրաթերթ, յունվար 1932:

(2) Լեօ, «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը», Բ. Հասոր:

յարձակը, կամ թէ կարիլի է՞ր համաձայնիլ թուրքերուն հետ եւ արգիլել այս պատերազմը, որ վերջնականապէս մեր մէջքը կոտրեց», լսենք այդ ղէպերու ականատես մը.

«Մի փաստ Ֆուս է անհերքելի ու ազազակող մենք չենք արել այն ամէնը, ինչ որ պէտք է անէինք — պարտական էինք անելու — պատերազմից խոյս տալու համար: Անկախ նրանից, թէ որքան կը յաջողէինք մենք պէտք է փորձէինք հաշտութեան լեզու գտնել թուրքերի հետ: Սա է որ չենք արել: ... Եստ վստահ ենք եղել մեր սեփական ուժերի վրայ: Այստեղ էր հիմնական սխալը: Չենք վախենում պատերազմից, որովհետեւ վստահ էինք թէ կը յաղթէինք: Անփորձ ու տգէտ մարդկանց յատուկ անփութութիւնով, մենք տեղեկութիւն չունէինք թէ ինչ ուժեր են կազմակերպել թուրքերը մեր սահմանազխին եւ չէինք զգուշանում:

«... Կարծես ինքներս ուրում էինք ու ցանկասում պատերազմ: Երբ արդէն սահմանին վրայ զինական ընդհարումները սկսած էին, թուրքերը առաջարկեցին մեզ տեսնել ու բանակցիլ: Մենք մի արհամարհական ժեստով մերժեցինք առաջարկը: Եւ դա մեծ յանցանք էր»: (1)

Բնորոշիչ «ժեստ», «ընտրելագոյն ցեղի» մը «մարտական» կուսակցութեան, որ նորէն գործիք ու խաղալիք դարձած էր անգլիական քաղաքականութեան: Այս մասին լսենք նաեւ Լէօն.

(1) Յ. Քաջագնորնի, «Է. Յ. Դաւենակցութիւնը Անեկի Զուրի Այլեւս»:

«Որ Մուսթաֆա Բէմալի կառավարութեան հետ կարելի էր որոշ համաձայնութեան զալ, հետեւում է հենց այն բանից որ Համաձայնութեան պետութիւններին նա առաջարկում էր յետ վերցնել լոյներից Չմիւռնիան եւ վերադարձնել Թուրքիային եւ դրա փոխարէն համաձայնում էր ճանաչել Հայաստանի անկախութիւնը: Բայց դաշնակցականները կռախ կերպով մերժեցին Անգարայի առաջարկը: Դաւանակցական կառավարութեան զլխին հրամանատար եր դուած անզլիական գեներալ Սոսուր, որ ապրում էր Երեւանում եւ ուղղութիւն էր տալիս գործերին: Սկսեց մինոր հայ-թրքական պատերազմ: Դաւանակցական բանակը քեւ Բեմալիանից աւելի* սուտ եր, բայց արագ քայքայեց եւ չկարողացաւ պահել քէմալականների արշաւանքը: Գեներալ Սոսուր թոյլ չսեց, որ պարսեւոյ երկիրը համաձայնութիւն կայացնի Խորհրդային Ռուսաստանի հետ»: (1)

Յյո՛, անզլիացիները թոյլ չտւին, որ Հայաստան համաձայնի Յ. Ռուսիոյ հետ եւ առյաւէտ ազատւի ոչնչացման եւ շահագործման ահռելի վտանգէն, որովհետեւ բրիտանական իմպերիալիզմը դեռ կը յուսար Հայաստանի միջոցաւ տիրանալ Պարսի նաւթահորերուն, որոնց հոտը պինդ բռնած էր այս իմպերիալիստական շան քիթը... Ու «Հայաստանի դաշնակցական կառավարութիւնը, որ միայն ռուսահայ պուրժուակիայի կառավարութիւնն էր, կատաղի տոկունութեամբ կատարեց իմպերիալիստներու բոլոր պահանջները»:

«Ոչ մէկ փաստ այնքան լաւ չի բնորոշեր դաշնակցական կառավարութեան իսկական եռութիւնը, որ»

(1) Լեօ «Թիւրքահայ Յեղափոխութեան Գաղափարաբանութիւնը» Բ. հատր:

քան նրա դիրքը Խորհրդային կառավարութեան հանդէպ:

«... Մոսկւայի մեծամասնական (ընդեւիկեան) կառավարութիւնը պատրաստ էր իր ձեռքը երկարել Հայաստանի աշխատաւորութեան, եթէ միայն Հայաստանի մէջ իշխող կառավարութիւնը հրաժարէր իր իմպերիալիստ սկտն եւ հա՛յայեղափոխական գործելակերպէն, խզէր իր յարաբերութիւնները իմպերիալիստական պետութիւններու հետ: Միաժամանակ ան կ'առաջարկէր դաշնակցական կառավարութեան, իր վրայ առնել միջնորդի դերը եւ խաղաղ կերպով լուծել հայ-թրքական վէճը:

«Դաշնակցականները կը դրկեն իրենց պաշտիրակները Մոսկւա, բայց միաժամանակ ամէ՛ց ինչ կ'ընեն պաշտիրակներու գործը ջուրը ձգելու եւ հնարաւոր հասցուքիւնը խանգարելու նպատակով.. Պատուիրակութեան անդամ կ'ընտրեն անոնք՝ որոնք երկրին մէջ իրենց հակախորհրդային ուղղութիւնով յայտնի էին (Լեւոն Շանթ, Հ. Տէրտէրեան եւ Չարաֆեան): ... Հայաստանի պատուիրակութիւնը իր պատուիրակները լիազօրած էր չանապարել եւ շէպի Մոսկւա շարժիչ չափազանց դանդաղ: Խնդիրը այն էր, որ ճիշդ այդ ժամանակ, Լոնտոն բուրժուերու եւ անգլիացիներու միջեւ գաղտնի բանակցութիւններ սկսած էին: Դառնակցականները մեծ յոյսեր կը սածէին, որ անգլիացիներէ աւելի բան կրնան ստանալ քան Խ. Հանրապետութիւնը:» (1)

Այս «լիազօրութիւններով», պատուիրակութիւնը վերջապէս մէկ ամիսէն կը հասնի Մոսկւա: Ան առաջին օրէն իսկ կտրուկ կերպով կը յայտնէ թէ՛ դաշնակ-

(1) Կարինեան, «Իմպերիալիստական Պատերազմը եւ Հայաստան»

ցական կառավարութիւնը ոչ մէկ կերպով կուզեր իմպերիալիս համաձայնականներու հետ իր կապերը խզել: Շանթ գիտէր թէ Մոսկւայի համար հաշտութեան առաջին եւ ամենակենսական պայմանը՝ «Բիւրօ-կառավարութեան» իր իմպերիալիստական «դաշնակիցներէն» հեռացումն էր: Ու այս անկարելի էր դաշնակցականներուն համար, քանի որ իրենց ամբողջ զործունէութեան ընթացքին կը կառավարուէին նոյն այդ իմպերիալիստներու ներկայացուցիչներուն խորհուրդներով: Ու այս շեւով, անյաջողութեամբ, վերջ կը գտնէին Մոսկւայի «բանակցութիւնները», որոնք կրնային շատ մը կորուստներ ու զիջումները խնայել Հայաստանին:

Հետեւանքն այն եղաւ, որ զօրավար Անդրանիկի նման անկեղծ հայրենասէրներ, որ կը պահանջէին Հայաստանէն դուրս վտարել «զեներալ Սդոքսները» եւ օր առաջ համաձայնիլ Խ. Ռուսաստանի հետ ու անոր օժանդակութիւնը ապահովել, անգլիացիներու հրահանգով եւ «Բիւրօ-կառավարութեան» ձեռքով ՎՌՆ-ՏԻԵՑԱՆ Հայաստանէն: Ազգային այս անմահ հերոսը, որ միշտ կ'ըսէր. «Ես հայ ժողովուրդի զինւորն եմ, ո՛չ թէ որեւէ կուսակցութեան», իր «անկախ հայրենիքէն վտարող մարդիկը այն դաշնակ շէֆերն են, որ այսօր ալ կը յանդգնին դեռ անամօթաբար շահագործել Անդրանիկի անունը, զաղթահայութիւնը գրգռելու համար այն հայրենիքին դէմ, որուն Անդրանիկ նւիրեց իր երեսուն տարիներու անկեղծ պայքարին խորհրդանիշը եղող սուրը...»:

Ուրիշ նկատելիք կ'էտ մը. «քէմալականից աւելի սուտար թիւով բանակ ունեցող դաշնակցութիւնը», նոյն այդ դաշնակցութիւրը որ մինչեւ այսօր ալ կ'երգէ իր «մի ժամայ մէջ մազրիկ ցեղը ջնջելը», միայն ու միայն քառասուն քէմալական զինւորներու

կը յանձնէր Կարսի նման սպառազինւած ահարկու բերդաքաղաք մը... Ու «պատերազմը վերջացաւ մեր կատարեալ պարտութեամբ Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինւած էր ու լաւ հազւած, չկուեց զօրքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, գէնքերը թափում ու ցրում գիւղերը»։ (1)

Նոյեմբերի վերջերը Քեազիմ Գարա-Պէքիր փաշա յաղթական Ալէքսանդրապօլ կը մտնէր։ Յաղթւած ու վարկաբեկւած «Բիւրճ-կառավարութիւնը» իր տեղը անմիջապէս յանձնեց Վրացեանի դահլիճին։ Նոր կառավարութեան կը ձար այլեւս կամ թուրքերուն հետ հաշտուիլ կամ երկիրը յանձնել հայ համայնապարնեւորուն, որոնք կարմիր զօրքերու զլուխն անցած մտած էին արդէն Իջեւան ու Դիլիջան։ Նոյեմբեր 29-ի լուսադէմին, Իջեւանի մէջ, Հայաստանի Ռազմա-Յեղափոխական կոմիտէն, Կասեանի ղեկավարութեամբ, Հայաստանը կը հռչակէր Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն, եւ նոյն օրն իսկ կ'ուղղէր դէպի Երեւան։ Վրացեան՝ կառավարութեան զլուխը անցնելէն անմիջապէս յետոյ Խատիսեանն ու Դիւլխանդեանը արդէն զրկած էր Ալէքսանդրապօլ Գարա-Պէքիրի հետ բանակցութիւնները սկսելու համար։

Մոսկւայի ծախողած բանակցութիւններէն յետոյ, Հայաստանին օժանդակելը անհրաժեշտ համարելով, Խ. Ռուսիա՝ իր կողմէ Լէզրանը լիազօր ներկայացուցիչ զրկած էր Երեւան։ Այս վերջինը աշխատեցաւ համոզել Վրացեանը, որ ետ կանչէ Խատիսեանի պատւիրակութիւնը Ալէքսանդրապօլէն եւ առաջարկեց հայ եւ ռուս կարմիր զօրքերով կանգնիլ Ալէքսանդրապօլի պատերուն տակ։

(1) Յ. Քաջազնունի, «Հ. Յ. Դաւեանիցութիւնը Անեւիք Զունի Այլեւս»։

Վրացեան որոշ պատասխան մը չտուաւ Լէզրանին, մինչեւ որ Իջեւանի ռազմայեղափոխական կոմիտէն հասաւ Երեւան: Ու 1920 դեկտեմբեր 2-ի կէսօրին, Կասեան-Լէզրանի եւ Վրացեանի միջեւ ստորագրեցաւ «Երեւանի համաձայնագիրը», որով՝ Վրացեան կը ճանչնար Հայաստանի խորհրդայնացումը:

Քայց «վարչապետը» կ'ուզէր շարունակել իր պաշտօնը... եւ դեկտեմբեր 3 ի լոյս առաւօտեան ժամը 2-ին, Սատիսեանին ստորագրել կուտար «Ալեքսանտրապօլի դաշնագիրը», հեռախօսով հրահանգելով անոր. «դուք լիազօրւած եք ստորագրել դաճնագիրը», երբ արդէն 14 ժամ առաջ, լիազօրոյ կառավարութիւնը տապալւած էր եւ ստեղծւած՝ խորհրդային իշխանութիւն... Վրացեան գիտէր թէ ինչ կ'ընէր. ան կրնար չստորագրել այդ դաշնագիրը, բայց, Քարա Պէքիրի կողմէ պարտադրւած խայտառակ դաշնագիրը ստորագրելով, ան կը յուսար թէ Թուրքիոյ օգնութեամբ նորէն կրնայ իշխանութիւնը ձեռք անցընել ու նորէն տիրել աներակ Հայաստանի վրայ:

«... Յայտարարւած էր Կասեանի ղեկավարութեամբ խորհրդային կառավարութիւն որ անցաւ Երեւան: Սատիսեանն ու Գիւլխանդեանը շտապել էին Ալեքսանտրապօլ Կարա Պէքիր բաշայի հետ դաշն կապելու: Խորհրդային Հայաստանի կառավարութեան խնդրանօք Մոսկւան ղրկած էր Ալեքսանտրապօլ ընկեր Մտիվանուն, միջնորդի դեր կատարելու եւ ազատելու Հայաստանը սոսկալի կացութիւնից: Թուում էր, թէ Սատիսեան պիտի հրաժարէր բանակցութիւնները շարունակելուց: Սակայն, նա ստորագրում էր գիշերով Ալեքսանտրապօլի խայտառակ դաշնագիրը, դաշնակցական կառավարութեան անունից, որ արդէն 14 ժամ առաջ մեռած էր:

«Մտիվանու մասնակցութիւնը մերժուում է: Ինչո՞ւ»

«Գուցէ խոստում է եղել Կարա-Պէքիր փաշայի կողմից օգնել դաշնակցականներին, բշելու Հայաստանից բուլշեվիկ կառավարութիւնը:

«Գուցէ դրանով պիտի բացատրել Վրացեանի ադիոդորմ պաղատանքը թուրքերին՝ օգնել փետրուարեան աւանդիւրային:

«Ապա Բէահետտին բէյի քաջալերանքը հայ մարզերիստներին — դիրքերում լաւ կուել բուլշեվիկների դէմ, խոստանալով օգնութիւն...»

«Գուցէ Խատիսեանը կը բացատրէ այս հանելուկը»: (1)

Առնենք Ալեքսանտրապօլի դաշնագրին մի քանի կարեւոր յօդուածները.

«Յօդ. 3. — Ինչպէս որ թուրք, ուս ու բուր աշխարհի վիճակագրութիւնները ցոյց կուտան, այս առթիւ ալ կը վաւերացի թէ օսմանեան սահմանին մէջ հայ մեծամասնութիւնը ունեցող ո՛ւրեք հողամաս չկայ:

«Յօդ. 6. — ... Երեւանի Հանրապետութիւնը յանձն կ'առնէ, ո՛ւրեք զիւրաւան կազմակերպութիւն չարտօնել, բացի 8 դաշտային կամ լեռնային թնթանօթներով եւ 20 զնդացիներով ու 1.500 հոգինոց վճարովի զօրամասէ մը: Պարտադիր զինուորութիւնը արգիլւած է:

«Յօդ. 7. — Երեւանի կառավարութիւնը կ'ընդունի որ հաշտութենէ յետոյ Երեւան բնակելիք թուրք ղեկավար կամ ներկայացուցիչը այս պարագաներու մասին բնութիւն եւ հետազօտութիւն կատարէ:

«Յօդ. 11. — Երեւանի կառավարութիւնը թուրք Ազգային Մեծ Ժողովի կառավարութեան կողմէ բա-

(1) Ա. Երզնկեան, «Յուշեր»:

ցարծակապէս մերժւած Սերի դաշնագիրը չեղեալ կը նկատէ:

«Յօդ. 13. — Թուրքիա, մինչեւ ընդհանուր հաշտութեան կնքելը պիտի կարենայ իր հակակռին տակ պահել Երեւանի Հանրապետութեան երկաթուղիներն ու հաղորդակցութեան միջոցները:

«Յօդ. 15. — Երեւանի Հանրապետութիւնը յանձն կ'առնէ չեղեալ համարել իր կողմէ ո'րեւէ տէրութեան հետ կնքւած դաշնագրերու այն բոլոր տրամադրութիւնները, որ Թուրքիոյ կը վերաբերին եւ կամ Թուրքիոյ շահերուն փասակար են:»

Շատ հետաքրքրական է նկատել որ սոյն դաշնագրին մէջ բնաւ չի յիշւիր «Հայաստան» բառը, այլ կը կրկնւի քանիցս «Երեւանի Հանրապետութիւն»: Այնքան քծնանք Թուրք բաշաներու առջեւ, որ «հայ յեղափոխականները» չեն յանդգնիր Հայաստան կամ Հայ բառը գործածել... Եւ ասոնք այն «ասպետներն» են, որ մինչեւ այսօր կը կրկնեն, «Ով որ դաշնակցական չէ, հայ չէ»... Նոյն այդ «զտարիւն հայերը» Ալեքսանտրապօլի խայտառակ ստորնագրով (ոչ թէ դաշնագիր), իրենց սեփական որոշումով ու ցանկութեամբ յաւիտենապէս կը թաղէին Թրքահայ ժողովուրդի դատը: Ու զարմանալին հոն է, որ Թրքահայ ժողովուրդի այդ նոյն դահիճները դեռ անամօթաբար կը յանդգնին «պահանջել» որ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը իրենց թաղած «դատը» վերակենդանացնէ... Աւելին, նոյն դաշնագրով «հայ» դաշնակցականները «Երեւանի հանրապետութեան» ժողովուրդին կը պարտադրէին խայտառակ ստրկացումը, Թուրք բաշաներու բռնակալ լուծին ներքեւ... Այս բոլոր ստորնացումներու փոխարէն դաշնակցութիւնը «կը վարձարւէր» այն տխրահոչակ 5-րդ յօդւածով որ կ'ըսէ.

«Յօդ. 5. — Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը Երեւանի Հանրապետութեան կը խոստանայ իր զինուորական օգնութիւնը, ներքին քեարսախին վսանգի ասեմ եւ այն բոլոր դէպքերուն մէջ, երբ Երեւանի Հանրապետութիւնը խնդրէ այդ օգնութիւնը:»

Ի հարկէ յայտնի է թէ «ներքին» եւ թէ ալ «արտաքին» թշնամին՝ նորահաստատ խորհրդային իշխանութիւնն էր, որը պէտք էր տապալել առաջին պատեհ առիթին...

Երեւանի համաձայնագրի 5-րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն բոլոր նախկին պետական պաշտօնեաներն ու դաշնակցականները ազատ համարձակ կ'ապրէին Հայաստանի մէջ, խորհրդայնացումէն վերջ: Բայց դաշնակ «վարչապետ ու նախարարները» Ալեքսանտրապօլի մէջ որոշած էին վար չդնել ժանգոտած զէնքերը... Ու 1920 դեկտեմբեր 20-ին, իրեն յատուկ քաղաքական մանկամտութեամբ յոյս դնելով Ալեքսանտրապօլի դաշնագրի 5-րդ յօդուածին վրայ, «հայ մարտական կուսակցութիւնը», Վրացեանի դեկավարութեամբ, որոշեց վերջին անգամ մըն ալ ցուցադրել աշխարհին իր արկածախնդրական «մարտունակութիւնը» եւ քանի մը օր եւս բազմիւր «նախարարական աթոռներու վրայ...

Վրացեան որոշած էր ապստամբութիւնը պայթեցնել Երեւանի մէջ, 1921 Յունվար 10 ին, բանակի դաշնակցականներու միջոցաւ: Բայց խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, որ կը հետեւէր 1920 դեկտեմբեր 20-էն ի վեր եղած ապստամբական պատրաստութիւններուն, ըմբոստոթիւնը արգիլեց, բանակի դաշնակցական սպաները արսորելով: Խորհր. իշխանութիւնը լաւ գիտեր թէ այդ սպաներուն ետին կնցող նախկին նախարարներն էին ըմբոստութիւն

պատրաստողները. բայց հայ բուլշեիկները վեհանձնութիւնը ունեցան Վրացեաններու ազատութիւնը չի վրդովելու, եւ ձգեցին որ անոնք ազատ համարձակ շարունակեն իրենց ստորերկրեայ աշխատանքը: Այս վեհանձնութիւնը կուգայ անգամ մը եւս ջրելու Վրացեաններու այն կեղծ պատճառաբանութիւնը թէ. «բուլշեիկեան բարբարոսութիւնները ստիպեցին զիրենք ըմբոստութիւն պայթեցնելու»: Յունվար 10-ին ծախողած ըմբոստութիւնը՝ Վրացեան կրցաւ յաջողորնել փետրւար 18-ին, Երեւանի մէջ: Խորհրդային իշխանութիւնը ստիպեցաւ ժամանակաւորապէս հեռանալ Երեւանէն, ու Վրացեանի «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն» կառավարութիւնը ձեռք առաւ:

Վրացեան անմիջապէս, հեռագիր հեռագրի ետեւէ, պատւիրակ պատւիրակի ետեւէ ղրկեց Անգարա, որ «Թուրք Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը» Ալէքսանդրապօլի դաշնագրի 5-րդ յօդ.ածի մէջ խոստացւած զինուորական օգնութիւնը շուտափոյթ հասցնէ «Երեւանի Հանրապետութեան որ կը կուէր «ներքին եւ արտաքին վտանգին» դէմ: «Փրկութեան Կոմիտէն» կրնար ուզածին չափ յոյս դնել այդ օգնութեան վրայ ու անոր սպասել... Բէմալ իրեն չափ մանկամիտ չէր որ փորձէր չափելի Խ. Հայաստանի ետին կանգնած հզոր Խորհրդային Ռուսիոյ հետ: Եւ Թուրքիա... չ'օգնեց Վրացեանին, հակառակ 5-րդ յօդ.ածի տրամադրութեանց:

Քառասուն երեք օրեայ քաղաքացիական կռիւներէ եւ եղբայրասպանութենէ յետոյ, 1921 Ապրիլ 2-ին «Փրկութեան Կոմիտէն» իր նախագահովն ու բոլոր արքանեակներովը կը փախչի Լեռնային Զանգեզուր: Հոն, երեք ամիս ալ ժողովուրդին դէմ կռիւը շարունակելէ յետոյ, 1921 Յուլիս 9-ին, հինգ միլիոն պետական գանձը շալակած, ժողովուրդին կողմէ

վերջնականապէս պարտւած դաշնակ շէֆերն ու շէֆիկները կ'անցնին Պարսկաստան, Տաթեւի վանքին քարծուներէն անդունդը զլորելով, արդէն աչքերը փորւած հարիւրաւոր հայ համայնավարներ: Զախջախւած զլուխով այս իժերը մնանելէ առաջ կ'ուզէին վերջին անգամ մըն ալ խայթել զիրենք կոխկրտող ժողովուրդը...

Ի՞նչ արժեց «մայիս 28-ի անկախութեան» ցնորական գաղափարաբանութեան վերջին պտուղ՝ քառասնօրեայ փետրւարեան արկածախնդութիւնը հայ ժողովուրդին. — Բսան հազար «կարմիր» թէ «ճեմակ» հայ աշխատաւորներու արիւնահեղութիւնը...

Ի՞նչ Եւրոպայի թուրքիացի եւ ի՞նչ կորսնցուց Հայաստանը «Փրկութեան Կոմիտէի» տիրապետութեան օրերուն:

Դժբախտ զուգադիպութեամբ մը, փետրւարեան արկածախնդութեան օրերուն (1921, փետրւար 18— ապրիլ 2), տեղի ունեցան երկու միջազգային խորհրդաժողովներ, մէկը Մոսկւայի՝ իսկ միւսը Լոնտոնի մէջ: Երկուքն ալ սահմանւած էին թուրքերուն հետ կապակցութիւն ունեցող խնդիրներու քննութեան. երկուքին մէջ ալ օրակարգի մաս կը կազմէր Հայաստանի սահմաններու հարցը, երկու ժողովներուն ալ թուրքիա պիտի ներկայանար իբրեւ հաշտուող: Եւ թուրքիան ներկայացաւ երկուքին ալ Ալեքսադրապոլի դաւենագիրը ձեռքին, որը միջազգային տեսակէտով ալ ի զօրու էր այն օրերուն, որովհետեւ նոյն միջոցին (1921 մարտ) Հայաստանի կառավարութիւնը դաշնագիրը ստորագրող մարդոց ձեռքն էր:

Աւելի դժբախտ պարագայ մը թուրքիայէն օգնութիւն «ւպասող» Վրացեանը՝ թուրքերուն աւելի հաճելի եւ քծնող երեւնալու համար, Ալէքսանդրապոլի խայտառակ դաշնագրին վրայ կ'աւելցնէր հետեւ-

եալ աւելի խայտառակ ուստիօհեռագիրները .

«Մոսկւայի ԿոնՖերանսը իրաւասու չէ քննութեան առնելու Հայաստանի եւ հայկական խնդիրները: Հայաստանի Յեղափոխական Կոմիտէի ներկայացուցիչ եւ Խորհր. Հայաստանի արտաքին գործերի ժողովրդային կոմիտարն (Ա. Բեկզասեան) իրաւունք չունի մասնակցելու կոնՖերանսին, քանի որ արդէն սապալւած է խորհրդային իշխանութիւնը»:

1921 մարտ 12

Ս. Վրացեան, Ռասիո Չիչերինին

Այս մասին լսենք նաեւ Ա. Բէկզասեանը.

«Խ. Հայաստանի կողմից պատգամաւոր ղրկւած էի Մոսկւա, խնդրելու որ Ալէքսանդրապօլի դաշնագիրը վերաքննւի: Ամենուրեք հանդիպեցի Կեղրոնական կառավարութեան բոլոր շրջանների անկեղծ համակրութեան:

«Լիովին հաստատած եմ, որ այսօր Կարսն էլ իր քաղանկերով եւ Նախիջեւանի ու Սուրմալուի գաւառներն ալ կցւած կը լինէին Խ. Հայաստանի, երէտեղի չունենար դժբախտ դեպքը (փետրուար 18-ի արկածախնդրութիւնը): Այն օրը Չիչերինի մօտ էի: Գրեթէ ստացել էի նրա հաւանութիւնը, Կարսն ու յիշեալ նահանգները մեզ վերադարձնել, երբ ստացւեց նախկին հանրապետութեան վարչապետ Ս. Վրացեանի չարաբախտ հեռագիրը»:

Կարգանք միւս հեռագիրը.

«Խնդրում եմ յայտնել Լոնսոնի ԿոնՖերանսին հետեւեալը: Հայաստան ուզում է ապրիլ հաւտ ու բարեկամաբար հարեւան քուրճիոյ հետ, ուստի ցանկանում է, որ Լոնսոնի ԿոնՖերանսի որոշումները առիթ չսան

փոխադարձ անվասահուրեան կամ դժգոհութիւնների
թիւրփայլի եւ Հայաստանի միջեւ»:

1921 Մարտ 26

Ս. Վրացեան, ուսիօ Արսաբից Գործերի
Մինիստրին Լոնսոն (1)

Հիմայ Վրացեանին ու Վրացեաններուն հարցնենք
թէ, ինչո՞ւ է Ս. Հայաստանը միա՛յն 29.664 բառա-
կուսի քիլօմէթր տարածութիւն ունի եւ ո՛չ աւելի...
Ինչո՞ւ Կարսը, Նախիջեւանը, Ղարաբաղը իրենց շր-
ջաններով թորհ. Հայաստանի մաս չեն կազմեր...

Ընթերցո՛ղ, ահա՛ ինչ որ տւաւ թուրքերու կող-
մէ պարսադրւած «Մայիս 28 ի անկախութիւնը» Հա-
յաստանին ու հայ ժողովուրդին երկուքուկէս տարի-
ներու ընթացքին: Առաջին օրէն սկսեալ պատերազմ՝
Վրաստանի հետ, պատերազմ՝ Ադրբեջանի հետ, ա-
րիւնահեղ կոիւներ երկրէն ներս, 1920-ի աշնան «մեր
մէջքը կոտրող» հայ-թրքական պատերազմը, Ալէքսան-
դրապօլի խայտառակ դաշնագիրը եւ վերջապէս աւելի
խայտառակ 1921-ի փետրուարեան եղբայրասպան ար-
կածախնդրութիւնը: Ու այս բոլորին իբր անխուսա-
փելի հետեւանք. պատերազմի խուճապ, անօթու-
թիւն ու սով, թշուառութիւն ու համահարակ, եւ բը-
նակչութեան ահոռի մահացում.

(1) Ալեքսանդրապօլի դաշնագրին եւ փետրուար
18-ի արկածախնդրութեան հետ կապւած հարցերը բո-
լոր մանրամասնութիւններով ուսումնասիրելու հա-
մար՝ կարդալ Հ. Յ. Իսախանյանի «Կեդրոնական
Կոմիտէի նախկին անդամ՝ Շահան Նաթալիի 1934ին
հրատարակած՝ «Ալէքսանդրապօլի Դաշնագրէն 1930-ի
Կովկասեան ապաստամբութիւնները» անուն գրքին Ա.
Հասոբի:

«Ժողովուրդը սպառուում էր վառուղ մոմի պես»

Ի՞նչ տուաւ Դաշնակցութիւնը հայ զիւղացիութեան եւ յայ աշխատաւորութեան, իբր «ընկերվարական»(?) կուսակցութիւն, իբր երկրորդ կամ բանւորական Միջազգայինի անդամ, իբր «Մշակ բանւոր ընչպէք ախպէք» երգող կուսակցութիւն... Ոչի՛նչ: Հայաստանի հողերը համայնացնել եւ հողագործի, անօթի ու ճնշւած զիւղացիներուն բաժնել զանոնք, ընկերվարական պետական կուսակցութեան մը առաջին գործը պէտք է՞ր ըլլար: Ձեր երկուքուկէս տարւայ «անկախսւթեան» ժամանակ առիթ չունեցաք «ընկերվարական կարգեր հաստատելու», որ, Պ. Աղբալեան, այսօր, 1937 մարտ 6-ին, (Պէյրութ) կ'ըսէք. «Եթէ անկախ կառավարութիւն մը ունենայինք մեր առաջին գործը պիտի ըլլար սոցիալիստական կարգեր հաստատել»: Այսօր, պարագաներու բերումով, անցւած «ընկերվարական» կեղծ դիմակը կը կարծէք որ ձեր իսկական տխուր դիմակը ծածկէ... Հիթլէրն ալ կը պոռայ աշխարհին թէ ինք «ազգայնական-ընկերվարական» է, կարմիր դրօշակ կը պարզէ եւ «Մայիս 1-ը» իբր ազգային տօն կ'ընդունի, գերման ժողովուրդը խաբել փորձելու համար.. Բայց Հիթլէրն ու անոր հայանուն եւ ամեն գոյնի գործակալները արդէն հասկցած են որ կարելի է՞ դիմակափոխութեամբ եւ լարախաղացութիւնով թմրեցնել ու քնացնել ժողովուրդները:

«Ընկերվարական» դաշնակցականներ, ինչո՞ւ համաթուրանական ծրագիրներ հետապնդող միլիական թուրքիոյ դէմ՝ չուզեցիք համաձայնիլ ընկերվարական խորհրդային Ռուսիոյ հետ, որ պատրաստ էր, դարերէ ի վեր ճնշւած ու իր «բարեկամներէն» լքւած, հայ ժողովուրդին իր եղբայրական օժանդակութիւնը բերել:

Այս բոլոր հարցումներուն պէտք է պատասխանեն

ա՛յն տասնեակ մը ոռւսահայ դաշնակ շէֆերը, որոնք փառամոլութենէ եւ արկածախնդրական աթոռամոլութենէ մղւած, ամբողջ ժողովուրդ մը անդունդէ անդունդ առաջնորդեցին նրէկ, իսկ այսօր ալ գաղթահայութիւնը կ'ուզեն նոյն ճամբուն վրայ մոլորեցնել, միայն ու միայն իշխանական ու նախարարական ցոփ ու զեղխ կեանք մը կարենալ վարելու համար եւրոպական կամ այլ մայրաքաղաքներուն մէջ:

Դաշնակցական շարքային կամ համակիր բարեկամներ, եթէ դուք ալ լսելով ու զիտնալով հանդերձ բոլոր այս դառն ու տխուր իրականութիւնները, դեռ կը յամառիք հետեւիլ ձեր շէֆերուն «ցեղակրօնական», «ընտրելագոյն ցեղեան», ֆաշիստական հայրենադաււը արկածախնդրական գործունէութեան, դո՛ւք, դաշնակցական աշխատաւորներ, դո՛ւք այն ատեն ձեր շէֆերէն աւելի դատապարտելի կ'ըլլաք, անոնց հին ոճիրներուն իրաւունք տալով եւ նորերն ալ քաջալերելով:

* *

Երբեմն կողմակի կը լսւի. — Եթէ «մայիս 28-ի անկախութիւնը», շարունակէր աւելի երկար տարիներ, լաւ արդիւնքներ ալ պիտի կարենար տալ:

Առ այժմ ընդունելով թէ կրնար շարունակել այդ «անկախութիւնը», նայինք թէ ի՞նչ պիտի պատահէր: Արդէն տեսանք թէ «անկախութեան» ամենավերջին հանգրւանն էր Ալէքսանտրապօլի դաշնագրին ստեղծած խայտառակ ու ստրկային դրութիւնը: Եթէ Խորհրդային Իշխանութիւնը չի հասնէր, «անկախ» Հայաստանը Թուրքիոյ անմիջական հրամաններուն տակ գտնւող նահանգէ մը տարբեր բան մը չպիտի ըլլար քաղաքականապէս, եւ ի հարկէ տնտեսապէս ալ՝ Թուրքիոյ համար շահագործման շուկայ մը: Պահ մը ենթադրելով նոյն իսկ թէ Ալեքսանտրապօլի դաշնագիր

գոյութիւն չունի, Հայաստան պիտի կարենա՞ր, ո՛չ թէ իր «անկախութիւնը», այլ նոյն իսկ իր ֆիզիքական գոյութիւնը պահել, զինք օր առաջ կլանելու պատրաստ թշնամիներով շրջապատուած ամենավտանգաւոր դրութեան մը մէջ, եթէ խորհրդային կարգերը չհասնէին: «Անկախ» Հայաստանի երկուքուկէս տարւայ պատմութիւնը մեզի ի՞նչ կ'ըսէ .. Տարակոյս չկայ որ՝ հայ ժողովուրդը եթէ աւելի երկար ժամանակ շարունակէր «մայիս 28-ի անկախութեան» արկածախնդրական ճանապարհը, Հայաստանի ու հայ ժողովուրդին անունը պատմութեան պիտի անցնէր այլեւս...

Ըսողներ ալ կան թէ մայիս 28-ը պէտք է ընդունին որպէս հայ ազգի անկախութեան առաջին օրը, նոյեմբեր 29-ը միայն անոր ուրիշ մէկ ձեւի շարունակութիւնն է:

— Պաթումի մէջ թուրք բաշաներու կողմէ պարտադրուած ու Թիֆլիսի մէջ, հայ ժողովուրդի խորթ եւ անհարազատ ինքնակոչ ներկայացուցիչներուն կողմէ, իրենց կամքին բոլորովին հակառակ, հաւկադրանքի սակ եղած «Անդրկովկասեան հայկական գաւառներու գերագոյն իշխանութեան» յայտարարութիւնը, որ կը խուսափի Հայաստան ու անկախութիւն բռնբռն, ո՞ր տրամաբանութիւնը կրնայ ընդունիլ իբր Հայաստանի եւ հայ ազգի անկախութիւնը...

Գործ մը արդիւնքէն կը դատուի: «Մայիս 28-ի աքթին» արդիւնքը կարելի եղած չափով պատկերացուցինք: Ընթերցողին կը մնայ այլեւս այդ մասին իր համոզումը գոյացնել: Կարելի չէ երկու հակոտնեայ եզրեր իրարու մօտեցնել, խաւարը չի կրնար լոյսի ծնունդ տալ: «Մայիս 28-ի անկախութեան» խաւար ու տխուր պատկերը տւինք արդէն: Խորհ. Հայաստանի իրականութեան պայծառ լոյսը համայն աշխարհին առջեւ կը փայլի արդէն, եւ որուն մասին այս զրբոյկին մէջ ալ քանի մը խօսք պիտի ըսուի:

III

ԻՆՉՈ՞Ւ ԴԱՇՆԱԿ ՇԷՖԵՐԸ ՏՕՆԵԼ ԿՈՒՏԱՆ

«ՄԱՅԻՍ 28» Ը

Ըսինք արդէն, թէ Չանգեզուրի մէջ ալ պարտելով ժողովուրդին կողմէ, 1921 յուլիս 9 ին դաշնակ «սպարապետներն» ու «նախարարները» խուճապահար կը փախչէին դէպի Պարսկաստան, տօնքիշօթական նոր «արկածներ որոնելու» համար: Խորհրդային Իշխանութիւնը վերջնականապէս հաստատելով Հայաստանի մէջ, մասնաւոր հրամանագրով մը օրէնքէ դուրս հռչակեց «Փրկութեան Կոմիտէի» բոլոր անդամներն ու փետրւարեան արկածարսնդրութեան հեղինակ ու արքանեակ բոլոր դաշակ ղեկավարները: Ահա այդ օրէնի վեր է, որ արտասահման ապաստանած դաշնակ տասնեակ մը նախկին նախարարները զգացին թէ ալիւս անելիք չունին Հայաստանի մէջ: Անոնք հասկրցան թէ, նոյնիսկ եթէ ունենային այդպիսի «ատելիք» մը, Խորհրդային կառավարութիւնը երկրորդ անգամ քարեացակամ ու ներող չպիտի գտնէր այդպիսի իժ-մարդոց հանդէպ, որոնք ժողովուրդին զիրկը նստելով անոր սիրտը կրծէին:.. Նոյնպէս անոնք համոզուեցան թէ դուրսէն գաղտնի աշխատանք տանելով, անարեկչութիւն գործելով, քաղաքացիական կոիւյաջողեցնելու անկարող էին, եւ «քաղաքացիական կոիւր — եթէ ծագի էլ — պիտի վերջանայ մեր պարտութիւնով:» (1)

(1) Յ. Քաջազնունի, «Զ. Յ. Գաւառիկներ Անելիք Զունի Ալիւս:»

Գաշնակցական ղեկավարները երեսուն տարիներու տխուր փորձարկութենէ մը յետոյ հասկցած ըլլալով հանդերձ սա իրողութիւնը թէ «Հայաստանն ու հայ ժողովուրդը հում նիւթ չեն Դաւենակցութիւնը ապրեցնելու համար:» (1), սկսան որոնել ուրիշ «հում նիւթ» մը եւ զայն գտան անմիջապէս. — Գաղթահայութիւնը:

1920-ական թւականներուն գաղթահայութիւնը գրեթէ պատրաստ դաշտ մըն էր «անկախութեան» հեղինակ այս տասնեակ մը մարդոց գաղափարաբանութիւնը ընդունելու եւ անոնց հետեւելու համար, որովհետեւ գաղթահայութեան մեծ մասը իր մորթին վրայ չէր զգացեր այս նոյն մարդոց ապիկար ու անհարակ ղեկավարութեան արդիւնք՝ Թրքահայաստանի խելար ըմբոստութիւններն ու անոնց անմիջական հետեւանքը եղող տեղահանութիւնը, «մայիս 28-ի անկախութիւնը», Ալեքսանտրապօլի դաշնագիրն ու փետրուարեան արկածախնդրութիւնը, իրենց տխուր հետեւանքներով: Գաղթահայութեան մէկ մեծ տոկոսը կը կ'ազմէին այն մարդիկ, որ դեռ կ'ապրէին «միացեալ եւ անկախ Հայաստանի» երազներով, որ Սեւրի դաշնագրին ստորագրութեամբ ամբողջ աշխարհ մը շահած ըլլալ կը կարծէին: Բնական էր ուրեմն, որ «բոլշեւիկեան բռնակալութեան զոհ» (?) եղող այս «մեծ հայերը» գաղթահայութեան գուրգուրանքին եւ յարգանքին արժանի ըլլային: 1921-ին գաղթահայութիւնը միայն անուևով կը նանչնար այս «մեծ մարդիկը», ու դեռ չէր լսած նորագոյն պատմութեան անոնց մասին սւած վիժըր...

Առանց ժամանակ կորսնցնելու, այս տասնեակ մը

(1) Յ. Քաջազնունի, «Հ. Յ. Դաւենակցութիւնը Անեւիք Զունի Այլեւս:»

ex-ministre-ները սկսան խորհիլ միջոցներու մասին, որպէսզի գաղթահայութիւնը գար իրենց առջեւ խընկարկելու եւ իրեց անյատակ գրպանները լեցնելու: Բայց ինչո՞վ ստիպել... — Հեշտ բան: Տասնեակ տարիներէ ի վեր հայ օղորդութիւնը բաղդին հետ խաղցող այդ մարդիկը շատ լաւ գիտէին, թէ գաղթահայութեան մեծ մասը, այդ օրերուն, միայն ու միայն զգացումներէ տարւող, «ազգային» ատելութեամբ լեցած թուրքին դէմ, երազներով ապրող ու սնող, դեռ «քրիստոնեայ» եւրոպայի վրայ յայտնող, դառն իրականութիւնները տեսնել չուզող հաւ սքականութիւն մըն էր: Պէտք է ըսել, որ գաղթահայութիւնը բոլորովին դատապարտելի չէր իր այս սխալ մտայնութեան համար, որոտհետեւ նորագոյն պատմութիւնը դեռ չէր եկած զինք լուսարանելու, «ճշշւած ու փոքր ալգերու ազատութեան համար սկսւած» պատերազմին տխուր ու իրական դրդապատճառներուն մասին... Մինչ այդ, դաշնակ շէֆերը սկսան բոլոր աշխատանքները տանիլ այս մտայնութիւնը խորացնելու եւ, արմատացնելու ուղղութեամբ: Միայն այսքանը հերիք չէր. աւելի լայն յաջողութիւն գտնելու համար պէտք էր ցուցնել թէ, այս «ազգային զգացումները» պահպանելու ուզողը միայն ու միայն իրենք՝ դաշնակներն են. եւ որ Հայաստանի ներկայ իշխանաւորները՝ բոլշեֆիկները, որոնք հայեր չեն այլ Մոսկւայի «ծախւած հոգիներ», «ներքին թուրքեր», կ'ուզեն մեղցնել «ազգային» բոլոր զգացումները, վերցնել «ազգութիւնը», մոռնալ հայ ազգին «փառաւոր» անցեալը, վերջապէս «դաւաճանել արիական ընտրելագոյն ցեղի» բոլոր «գերմարդկային» իղծերուն, փափաքներուն, թռիչքներուն...

Միայն զգացումներէ տարւող գաղթահայութիւնը պէտք էր խանդավառութեամբ շնորհակցանել: «Մայիս

28-ի անկախութեան» նման «հերոսական արթեր» տօնել ամենալաւ առիթներն են մեծ խանդավառութիւն ստեղծելու եւ հոն, այդ գինովութեան մթնոլորտին մէջ կարելի եղածին չափ շատ սուտեր կըլլեցընելու ներկաներուն: Այսպէս «մայիս 28-ը» կը ներկայացուի ժողովուրդին իբր հայ ազգի վեց դարերու ստրկութենէ ազատագրման օրը, եւ ո՛չ թէ նոր ստրկութեան, պատերազմի, ջարդի, սովի ու թալանի նոր թւական մը: Նոյն «խանդավառ մթնոլորտին» մէջ կը փառաբանուին ու կը խնկարկուին «հայուն այդքան բախտաւոր օրեր պարգեւող» դաշնակցութիւնն ու անոր ղեկավարները: Նոյն առիթէն պէտք է օգտուիլ նսեմացնելու եւ սնւցնելու համար բոլշեւիկներն ու անոնց իշխանութիւնը, որ չի պահանջեր Մոսկւայէն կամ Անգարայէն «միացեալ եւ անկախ, ծովից-ծով Հայաստան» մը... — Բայց այսօր հայ ժողովուրդը ծնգի՛ կը հարցնէ, դաշնակ շէֆեր. ո՞վ էր Ալեքսանտրապօլի իսայտուակ դաւաճողով անկախութեան եւ բրահայ ժողովուրդի արդար իրաւունքներուն վրայ սեւ գիծ մը փառելը:

Փետրւարեան արկածախնդրութիւնը կը տօնելի իբր «համաժողովրդական ապստամբութիւն» մը բոլշեւիկներու «բարբարոսութեանց» դէմ, նոյն այդ բոլշեւիկներու, որ բմբոստութեան պատրաստութենէն լուր ունենալով հանդերձ, վեհանձնութիւնը ունեցան միայն դաշնակ սպաները արսորելու եւ ազատ թողնելու բոլոր «նախարարները»: Ի հարկ է պէտք է բոլորովին տարբեր ցուցնել այս աթոռամուկական հայրենադաւութիւնը, որ Ալեքսանտրապօլի դաշնագրէն վերջ, երկրորդ տխուր հարւած մը տուաւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն՝ Մոսկւայի եւ Լոնտոնի 1921ի խորհրդաժողովներուն առջեւ:

Այսպիսի բազմաթիւ առիթներով հայ ազգի օքա-

դաքական ղեկավար մարտական չկուսակցութիւնը»
խօսք կ'ուտայ «2/4 ժամէն գրաւել. . . Թուրքիան ու
ու Հայաստանը». — Ինչո՞վ... դաշոյններով ինչո՞վ...
կամաւորական խումբերով. ու ներկաները խելագար-
օրէն կը ծափահարեն տոնքիշոթական այս պոռչըտուք
ները: Տոն-Քիշոթն ալ կը պայքարէ հերոսաբար...
հողմադացներուն դէմ: Պէտք է առիթէն օգտուիլ զբր-
պանները յեցնելու համար, ու այս խելացնոր ու խան-
դավառ մթնոլորտին մէջ օրւայ քրնկեր Փանջունիս»
կամացուկ մը կ'ըսէ. «Մի էիջ փող ու դարկեցեք... դա-
շոյններուն եւ կամաւորներուն համար»:

— «Հայ ազգի փառաւոր անցեալին ու մշակոյթին
միակ պահապան հրեշտակ» (?) կուսակցութեան ղեկա-
վարները կը հրահրեն թուրքին դէմ ատելավառ վրէժ-
խնդրութիւն, «քրեքէն մի' խօսիր, յիշէ 1.000.000ը»
կ'երզեն, զիտնալով հանդերձ թէ այս քայլերը իրենց
խնկարկունները միայն ու միայն եղբայրասպանու-
թեան կրնան առաջնորդել «ներքին թոքըրւն» (?)
դէմ... Բայց պէտք է հարցնել այս պատգամները
ղրկող «ասպետներուն» թէ իրենց շէր՞ն 1908-ին ռեա-
գործ Իթթիհասին հետ սիրաբանողներն ու գործակցող-
ները, եւ 1927-ին Բարիզի մէջ Մուսավաքականներու
եւ Բանի մը վրացի մեցեւելիկներու հետ Պրօմէքական
դաւադրական ուխտը ստորագրողները. այն ուխտը,
որուն Դաշնակցութեան Կնդրոնական Կոմիտէն 4-ի դէմ
1 ծայնով (Շահան Նաթալի) իր հաւանութիւնը տուաւ,
որը միակ նպատակ պիտի հետապնդէր Քեմալի օգ-
նութեամբ Խոհրդային Անդրկովկասի վրայ յարձա-
կում գործել, խորհրդային բեմիմը տապալել, ու «ան-
կախ» Վրաստան, «անկախ» Ադրբեջան եւ «անկախ»
Հայաստան ստեղծել.. Թուրքիոյ հովանաւորութեան
ներքէ: Պատմական իրողութիւններ, որոնք իրենց
խտուր պտուղները տալ փորձեցին 1930-ին: Դեռ կրէկ,

իր 1936 յունիս 4-ի խմբագրականով հայ-վրացական միութիւն քարոզող «Յուսարեր»ը, Պերլինի փողոցները սլքտացող «Կովկասցիներու» բերնով չի խօսիր արդեօք...

Ահա՛ թէ աթոռներ վերագրաւելու համար ի՞նչ ստոր հայրենադա.ութիւններու ձեռնամուխ կ'ըլլան ձեզի «ազատ ու անկախ» Հայաստան խոստացող ձեր նենգամիտ քուրմերը, դաշնակցական շարքային ու համակիր բարեկա՞րեր: Եթէ վերոյիշեալ պատմական իրողութիւնները կ'ընդունիք, արդէն պէտք է զգաք թէ ծրագիր-նպատակ կորսնցուցած, եւ միայն ու միայն ձեզ շահագործելով, իրենց մարմինը փքւած աթոռամոլութիւնն ու փառամոլութիւնը սնուցանելու համար է, որ իրենց ցնորական ու արկածախնդրական գաղափարաբանութեան թոյնով ձեզ թմբեցնելով, այդ տասնեակ մը կովկասահայ շէֆերը, ձեզ կ'առաջնորդեն ոճիրէ ոճիր, եղբայրասպանութենէ հայրասպանութիւն, ու դաւաճանութենէ հայրենադաւութիւն...

Անգամ մըն ալ կրկնենք. — Եթէ այս բոլորը գիտնալով ու ընդունելով յանդերձ դեռ դուք կը հետեւիք բոլոր գաղթաշխարհը անձնական խանութի վերածել փորձող այս տասնեակ մը շէֆերուն, եթէ կը յամառիք անոնց հայրենադաւ սխրագործութիւնները ձեր համակրութեամբ ու ձեր քսակով քաջալերել, դո՛ւք, դաշնակցական աշխատաւորներ, դո՛ւք անոնցմէ աւելի դատապարտելի յանցաւորներ կ'ըլլաք:

Արդէն կը տեսնէք թէ մի քանի տարիներէ ի վեր իրենց հետեւորդներուն յանկարծակի նւազիլը զգալով, այդ քուրմերը իրենց հակահայաստանեան ուղղութեան մէջ որոշ բեկում մը յառաջ բերին: Դեռ երէկ «Հայաստանը վայաստան է, դժոխք է, ներգաղթը Մոսկւայի գործակալներուն մէկ դաւադրութիւնն է,

ո՛չ մէկ օժանդակութիւն և. Հայաստանին եւ ներգաղթին» պտուղները այսօր բերանը բոլորովին փոխած... ներգաղթ կը «պահանջեն» (ի՞նչ երեսով եւ ո՞ր իրաւունքով), Խորհրդային Հայաստանի մասին լաւ արտայայտելու կ'սկսին... բայց իբր իրենց գործը, էբր «մայիս 28-ի» արդիւնքը...

Վերջին խաղ մըն ալ. «գաղթահայութիւնը կազմակերպել»: — Այսինքն, տեսնելով թէ ժողովրդական զանգաւանները եւ վերջին ամիսները նոյնիսկ իրենց շարքայինները, երես կը դարձնեն առյաւէտ իրենցմէ եւ գաղթահայութեան հողն ալ, վերջին «հում նիւթ»ը՝ իրենց յոբերուն տակէն կը սահի կ'երթայ, ուղեկորոյս դաշնակ շէֆերն ու շէֆիկները կ'ուզեն իրենք զիրենք հայրենիքին համակիր ցուցնել եւ և. Հայաստանի բարեկամ ժողովրդական զանգաւանային կազմակերպութիւններուն վրայ յենելով, քիչ մըն ալ ուշացնել իրենց կարապի երգը...

«Վարչապետ» Վրացեան, շատ ճիշդ ըսած էք.

«Աւելի լաւ է գիտնալ դառն ճշմարտութիւնը, քան օրօրելի քաղցր ստերով»:

— Ճշմարտութիւնը սա է.

— Այլեւս գիտակցութեան եկած գաղթահայ ժողովուրդը իր դատարարը սւած է ձեր մասին: Ձեր գերեզմանները պէտք է փորելն հայ ժողովուրդէն ու Հայաստանէն բոլորովին դուրս ու հեռու, ձեր պատճառ վերջին կուտերուն ոտերուն սակ, Պետլինի կամ Հոռմի մեջ:



IV

ԻՆՉ ՏԻԱԻ ՆՈՅԵՄԲԵՐ 29 Ը ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ցոյց տալ, թէ ի՞նչ տուաւ Նոյեմբեր 29-ը հայ ժողովուրդին, պիտի նշանակէր Խորհրդային Հայաստանի տասնընեօթը տարիներու յաղթական կեանքին պատմականը կատարել, որուն համար պէտք են հատորներ: Այս գրքոյկին մէջ մենք պիտի բաւակա-
նանանք շատ ամփոփ ակնարկ մը նետելով Խ. Հայաստանի վրայ, մանրամասնութիւնները թողնելով արդէն այդ ուղղութեամբ հրատարակած գրքերուն, մամուլին եւ բեմերուն:

«Անկախ» Հայաստանի ժողովուրդը՝ սովամահ, պատերազմի փտանգին ենթարկւած, մազզէրիստներէն հալածւած, չի կարենալով այլեւս հանդուրժել «անկախութեան» զժոխային կեանքին, ապստամբութեան դրօշ բարձրացուց 1920 մայիս 10 ին Ալեքսանտրապօլի մէջ. Հայաստանի Կոմունիստական (բոլշեւիկներու) Կուսակցութեան ղեկավարութեամբ: Բայց, այս շարժումը որ, դեռ զօրաւոր եւ ընդհանուր չէր, չկրցաւ ձաւալիլ եւ ապստամբութիւնը չի յաջողեցաւ:

Մազզէրիստներու իշխանութեան արկածախնդրական քաղաքականութիւնը, հարստահարութիւնները, օրրստօրէ աւելի սաստկացող սովն ու թշուառութիւնը, եւ ի վերջոյ աշնան հայ-թրքական պատերազմը, խրթան հանդիսացան որ Հայաստանի բոլոր ժողովուրդը համախմբի բոլշեւիկեան կուսակցութեան շուրջը: Մայիսեան ապստամբութենէն վեց ամիս յետոյ, երբ Քեզզիմ Գարապէքիւր Ալեքսանտրապօլը գրաւած, կը սպառնար բոլոր Հայաստանն իր ձեռքն առնել. (Բիւրօ-

կառավարութիւնը անկարող էր հայ ժողովուրդի ու Հայաստանի ֆիզիքական զոյութիւնը պահպանելու), յեղափոխութիւնը ծայր տուաւ եւ Նոյեմբեր 29-ի լուսաղէմին, Յեղափոխական Կոմիտէն Իջեւանէն ժողովուրդին կ'ուղղէր յայտարարութիւն մը, որուն զըխաւոր մասը հետեւեալն է.

«Հայաստանի ապսամբ աշխատաւոր ժողովուրդի կամով եւ ցանկութեամբ Հայաստանի Կոմունիստական (բոլշեւիկներու) Կուսակցութիւնը այսօրեւեկ Հայաստանը կը յայտարարէ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն: Այսօրեւեկ Խորհրդային Հայաստանի կարմիր դրօշը պիտի պատշապանէ անոր աշխատաւոր ժողովուրդը ննուզներու դարաւոր լուծէն:»

Եւ այդ օրերնէ սկսեալ բոլոր նշողներն ու զիշատիչները անհետացան Հայաստանի հողին վրայէն: Նոյեմբեր 29-ը եղաւ ամենամեծ անկիւնադարձը հայ ժողովուրդի պատմութեան մէջ. ան եղաւ այն հուժկու բազուկը, որ կասեցուց հայ ժողովուրդի անկումը ոչնչացման անդունդէն վար. ան եղաւ այն արեւը, որ առաջին անգամ ըլլալով հայ բազմաշարժար ժողովուրդին վրայ սիւնեց նշմարիտ ազատութեան, անկախութեան, սալահովութեան ու խաղաղութեան կենսատու լոյսը: Նոյեմբեր 29-ին է, որ հայ ժողովուրդը յաւէտ փշոնելով իր բազուկն ու միտքը կաշկանդող բազմատեսակ շղթաները, կանգնեցաւ Խ. Միութեան ազատ ժողովուրդներու շարքին ու սկսաւ իր յաղթարշաւ սլացքը Պատմութեան մէջ՝ յանուն իր սեփական աւերակ երկրի վերակառուցման, յանուն իր ազգային մշակոյթի ու տնտեսութեան փայլուն վերածնունդին, յանուն համայն մարդկութեան ազատագրութեան եւ համաշխարհային խաղաղութեան...

Այս պատմական թւականէն ասդին, հայ ժողովուրդը արդէն կոխկրտած՝ մարդուն մարդու կողմէ

ԵՄԻՆԱԳՈՐԾՈՒՄԸ, իր ստեղծագործ բազուկն ու միտքը
եռանդազին լծեց իր հայրենիքի վերաշինութեան:

Աւերակ ու խաւարի մէջ կորսւած գիւղաքաղաք-
ներու եւ գիւղերու տեղ բարձրացան արդիական ճար-
տարարւեստական փայլուն քաղաքներ, գիւղաքաղաք-
ներ եւ հաւաքական ու խորհրդային տնտեսութիւն-
ներ:

Երէկի աննշան ու աղիւսաշէն, միայն 25 000 բը-
նակչութիւն ունեցող, Երեւանի տեղ, այսօր արդէն
հասակ նետած է մայրաքաղաք Երեւանը իր 150.000
բնակիչներով, իր հոյակապ շէնքերով, կանաչազարդ
լայն պողոտաներով, գիտական-մշակութային հիմ-
նարկներով, իր համալսարանով, ելեքտրակայաննե-
րով, ֆապրիքաներով ու սենթեթիք (արւես-
տական) ձգախէժի (բաուչու) հսկայ գործարանա-
խումբով: Գիւղաքաղաք Ալեքսանտրապօլի տեղ կանգ-
նեցաւ ճարտարարւեստական Լենինականը, իր զանա-
զան հանրային-մշակութային հիմնարկներով ու
հիւսւածոթղէնի նշանաւոր գործարանախումբով: Ղա-
րաքիլիսա գիւղը արդէն վերածւած է Խ. Հայաստանի
քիմիական ճարտարւեստի կեդրոն՝ Կիրովականի:
Ֆրանսական դրամատէրերու կողմէ նախնական միջոց-
ներով շահագործող Ալլահվերտիի պղնձահանքերը
այսօր կը շահագործւին հայ բանւորներու եւ հայ
էնժէնիէօր-մասնագէտներու կողմէ, ելեքտրօ-թեքնի-
քական ամենավերջին միջոցներով: Դարերէ ի վեր
գետնին տակ նիրհող Ղափանի պղնձի, կապարի, ար-
ծաթի եւ ոսկիի հանքերը արդէն լոյս աշխարհ հան-
ւած են: Սեւանի շրջանի դալարագեղ բայց կորսւած
գիւղերը՝ Ծաղկածոր, Դիլիջան, Զովունի եւս. դարձան
համաշխարհային համբաւ ունեցող հանգստեան վայ-
րեր: Ի զուր տեղը հոսող ջուրերը օգտագործւեցան
անապատները բամպակի ու ցորենի դաշտերու, մըր-

գաստաններու եւ այգիներու վերածելով — Շիրակի, Սարդարապատի, Վաղարշապատի, Երեւանի, Ղամարու լուի եւ այլ ջրանցքները որոգեցին Հայաստանի դարերով պապակած դաշտերը, քարքարոտ լեռնադաշտերը, հովիտները, աղբատ ու անօթի-ծարաւ գիւղերը, որոնք տեղի տւին հաւաքական տնտեսութիւններու (կոլխոզ) եւ խորհրդային տնտեսութիւններու (սովխոզ): Հայ գիւղացին մէկ կողմ նետեց իր նահապետական արօրն ու գութանը, եւ հուժկու դրաքտորները, «պողպատէ ծիւրը», սկսան սուրալ արարտեան դաշտի լայնատարած սովխոզներու մէկ ծայրէն միւսը:

Հայաստանի ջրվէժներն ու Սեւանայ լիճի հսկայ ջրամբարը ծնունդ տւին տասնեակներով ելքքտրակայաններու, որոնք իրենց անսպառ ուժով սկսան լուսաւորել դարերէ ի վեր խաւարի մէջ ապրող Հայաստանի քաղաքներն ու գիւղերը, դաշտերն ու լեռները. անոնք շարժման մէջ դրին մեր երկրին հանքերն ու ֆապրիքաները եւ Հայաստանին պարգեւեցին, աժան եւ առատ ելքքտրական ուժ պահանջող, աշխարհի առաջին սենթեթիք քառւոյնկի հսկայ գործարանախումբը: Հայաստանի պտուղները, պահածոնները, պանիրները, ձուկերը, «Արարատ» բոնեաքը, գորգերը եւ Արթիկի վարդագոյն մարմարը համաշխարհային համբաւ ստացան: Հայաստանի ելքքտրականութիւնը սկսած է արդէն ծախելի դրացի երկիրներուն: Մտրկութեան, անգործութեան, անօթութեան սեւ ուրւականը եւ այս բոլորին պատճառ՝ շահագործողները արդէն ընդմիջտ ոտնահարած բլլալով, հայ ժողովուրդը սկսած է արդէն իր «հալալ աւխասանք ուսել»:

Իր երկրին ու տնտեսութեան վերակառուցման գուզընթաց, հայ ժողովուրդը կրցաւ նաեւ առյաւէտ

վանել Հայաստանի վրայէն տգիտութեան խաւարը:

Պարտաշիր ու պետական ծրի ուսումը կը լուսաւորէ անխտիր բոլոր գիւղերու եւ քաղաքներու նոր սերունդին մտքերը: Անգրագէտ չափահասները, բանւորական համալսարաններու, գիւղական, ու գործարանային մշակութային հիֆարկներու մէջ կը սորվին իրենց մայրենի լեզւէն զատ, իրենց նախընտրած մասնագիտութիւնը: Երեւանի Պետական Համալսարանը իր 12000 ուսանողներուն կուտայ գիտական, լեզւաբանական, հասարակական բոլոր մասնագիտութիւնները: 750.000էն (1921-ին) 1.300.000-ի հասած Խ. Հայաստանի քնակչութեան 250.000ը կ' ուսանան ի նախնական, մասնագիտական եւ բարձրագոյն վարժարաններու մէջ: Անգրագիտութիւնը արդէն բոլորովին անհետացած է Խ. Հայաստանի ժողովուրդէն:

Երէկ, անօթութեան ու թշւառութեան դատապարտւած հայ զրագէտն ու արեւստագէտը այսօր Խ. Հայաստանի մէջ կ'արժանանան Պետութեան ու ժողովուրդին ամենամեծ գուրգուրանքին: Աւելին՝ արեւստի եւ գիտութեան ճամբան ազատօրէն բացւած ըլլալով բոլոր ժողովուրդին առջեւ անխտիր (եւ ո'չ թէ ունեւոր, յաճախ ապուշ, անձերու առջեւ միայն), դեռ երէկ հանքի, գործարանի կամ դաշտի մէջ աշխատող ուշիմ բանւորը կամ բանւորուհին այսօր դարձած է զրագէտ, արեւստագէտ կամ գիտնական:

Հայ ժողովուրդի անցեալի փայլուն մշակոյթին վերագարթնումին հետ, այսօր Խ. Հայաստանի մէջ կը կերտուի երկրորդ եւ առաջինէն աւելի հոյակապ ու բազմակողմանի ոսկեդար մը հայ զրականութեան, հայ երաժշտութեան, հայ թատրոնի, հայ նկարչութեան, հայ ճարտարապետութեան եւ հայ գիտութեան... Այս նոր ոսկեդարու ներկայացուցիչներն են Խ. Հայաստանի երիտասարդ բայց տաղանդաւոր գր-

րողներու, արեւստագէտներու եւ գիտնականներու հոյ-
լերը. անոր կենդանի եւ յաւերժական կոթողներն են
Պետական Համալսարանը, պետական մատենադարան-
ներու եւ հրատարակչականներու միլիոնաւոր հատոր-
ները, պետական երաժշտանոցը (քոնսերվատուառ)
օքերան, թատրոնները, հայ շարժանկարը (սինեմա),
Երեւանի ռատիօկայանը, պետական թանգարանները,
հոյակապ ժողովրդական տունները, գիտական եւ լեզու-
բանական կաճառները ու հարիւրաւոր հանրային-
մշակութային հիմնարկները. .

Քաղաքականապէս ու իր ֆիզիքական գոյութեան
տեսակէտով Խ. Հայաստանն աւելի քան երբեք ապա-
հով է. ըլլալով Խորհրդային հզօր Միութեան տասնը-
մէկ անկախ Հանրապետութիւններէն մին, պատերազմի
մը պահուն Խ. Հայաստանի սահմանները կը պաշտ-
պանւին (որպէս Խ. Միութեան սահմաններու մասը)
բանօրագիւղացիական մեքենայացած երեսուն մի-
լիոնոց ահարկու Կարմիր Բանակին կողմէ, որը արդէն
ահ ու սարսափ կ'ազդէ Խորհուրդներու Երկրին ու
խաղաղութեան ամենաոխերիմ թշնամիներուն:

Հայ ժողովուրդը, իր դարերու ընթացքին կա-
տարելիք յառաջդիմութիւնները արդէն իրականացու-
ցած է Խորհրդային կարգերու տասնըօթ տարիներու
անկաշկանդ մթնոլորտին մէջ: Այսօր, հակատաքաց ու
խրոխտ ան կանգնած է Պատմութեան առջեւ եւ իր
փայլուն իրականութեամբ ցոյց կուտայ իր երբեմնի
ինքնակոչ «պաշտպաններուն» ու «դաշնակիցներուն»
թէ՛ ճնշւած ու փոքր ժողովուրդներու ազատագրումը
ի՞նչ պայմաններու տակ կրնայ իրականանալ...

Մի քանի յատկանշանական վկայութիւններ Խ.
Հայաստանի մասին.

«Խորհրդային վարչածելը Հայաստանին բերեց
մարդկութեան տրամադրութեան տակ գտնւող հնա-

գոյն եւ նորագոյն նւէրները՝ ջուրը եւ ելեքտրական ուժը: Բայց, ամէն բանից առաջ, Խորհրդային Իշխանութիւնը Հայաստանին բերեց մի բան, որ չէր տեսել այս հրկիւրը դարերից ի վեր — խաղաղութեան, ապահովութեան եւ անկախութեան գգացում»:

Ս. Տ. ԳԱՖՐԻԷԼԵԱՆ

«Դարերից ի վեր անրաղդ մի որբանոց լինելուց եւ հալածելուց յետոյ, Հայաստանը այսօր դարձել է Խորհրդային Միութեան ամենասիրելի գաւազը:

«Տանջւած ու բազմաչարչար Հայաստանը, որ համաձայնականներու եւ դաշնակներու ողորմածութեամբ դատապարտւած էր սովի, քայքայումի, գաղթի, բոլոր «բարեկամներու» կողմէ խաբւած Հայաստանը, իր փրկութիւնը գտաւ Խորհրդային կարգերու հաստատումով... Միմիայն Խորհ. Իշխանութեան գաղափարն է, որ խաղաղութիւն բերաւ Հայաստանին եւ տաւ ազգային վերածնունդի հնարաւորութիւն: Թող գիտնան բոլոր անոնք որ պէտք է գիտնան, որ հայկական «հարց» կոչւածը, որուն վրայ գլուխ ջարդեր են իմպերիալիստական դիւանագիտութեան ձեր գայլերը, Խորհ. Իշխանութիւնը միայն ի վիճակի եղաւ լուծելու»:

ՄԹԱԼԻՆ

«Դաշնակից պետութիւնների ազահ ու յաւիտեան յանցաւոր քաղաքականութիւնը, հայ ղեկավար շրջանների անկարողութիւնն ու քաղաքական անհեռատեսութիւնը եւ հայ-թրքական վայրենի ու անզուսպ թշնամութիւնը Հայաստանը հասցրին օրհասականի դուռը:... Փոքր ժողովուրդները, յիրաւի, զրկւած բանւորներ են ազահ ու անխիղճ իմպերիալիստական հզօր պետութիւնների ճանապարհների վրայ: Նոր Ռուսաստանը, որ գալիս է նրանց հանի էդ ստրկական վիճակից՝ նոր դարաշրջան է բաց անում մարդկութեան պատմութեան մէջ: .»:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ռուսահայաստանում ունէինք մէկ միլիոն ազգա-
քնակչութիւն, որի 600.000 միայն հայեր եւ 400.000
ռչ. հայեր էին: Իսկ այժմս մէկ միլիոն հայ ունենք: Ահա՛
արդիւնքը, փաստ որ երկիրը դարձել է հայկական:
Չկայ մի պետութիւն որ օգնի մեզի, մենք լաւ էինք
միայն, երբ նրանց զինւոր էինք տալիս: Ներկայումս
առեւտրական դաշինքներ ունենք, մեր շօքօլան, ժա-
մացոյցները եւ մեքենայի կտորները սպառում ենք
Թիւրքիայում: Հնարաւոր չի թիւրքերին նեղացնել:
Ռւրիշ հնարաւորութիւններ չունենք բացի օրւայ Հա-
յաստանից, պէտք է լեզու գտնել Սովիէտների հետ: —
Մեր միակ յոյսը Հայաստանն է, այն Հայաստանը որ
ներկայումս կառավարւում է մեծամասնականներին
(բոլշեւիկներին) կողմից: Ա. ՆԱՏԻՍԵԱՆ

«Հայ ժողովուրդը իր ազատագրումը կրնայ զըտ-
նել միայն Չարիզմի տապալումով:

ՅՐԻՏՐԻԽ ԷՆԳԷԼՍ (1830)

«Ծաղկող Խ. Հայաստանը ձգողական կեղծոն է
դառնում դրամատիրական երգիւրներում գտնուող ըն-
չագուրկ հայ աշխատաւորների համար: Լ. ԲԵՐԻՍ

«Գիտենք թէ որքան տառապած էք անցեալին մէջ:
Գիտենք նոյնպէս, որ Խ. Միութեան մէջ ձեր մուտքը
ծեզի հնարաւորութիւն տաւ գտնելու ձեր իրաւունք-
ներուն եւ մշակոյթային երաշխիքը»: ԲԻԷՆԻ ԳՅԹ

«Խ. Հայաստանը թերեւս ամենէն զարմանալի ե-
րեւոյթն է որ Խորհրդային ստեղծագործութիւնը իրա-
կանացուցած ըլլայ ազգութիւններու մարզին մէջ:

Խ. Հայաստանն, ալ, Միութեան միւս մասերուն
պէս, նոր մեքենաներով լեցուն է, սա տարբերութեամբ

Արեւելուտքի հետ, որ հոս մեքենան հրճւանքի աղ-
բիւր մըն է. որովհետեւ մարդուս արժանապատու-
թիւնը կործանելու տեղ աւելի կը բարձրացնէ զայն՝
սպասաւորելով մարդուն: Եւ սակայն, աւելի հետա-
քրքրական քան մեքենաներն ու թեքնիքը, հոն կը
տեսնենք նոյն ինքն մարդը, այն նոր մարդը որ կեր-
պարան կ'առնէ Լեհական սահմանազխուն եւ Խա-
ղաղականի միջեւ, այն ազատ մարդը, որ Հայաստա-
նի մէջ, օրինակ յաջողած է իր հոգին մաքրել դիւա-
յին ատելութիւններէն, որոնք դրացի ժողովուրդ-
ներ իրարու դէմ կը հանէին»:

ԺԱՆ-ՌԻՇԱՐ-ՊԼՕՔ

V

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԸՆԷ ԱՅՍՕՐ ԳԱՂԹԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Գաղթահայ ամէն մէկ աշխատաւոր, ըլլայ ան
նոյնիսկ դաշնակցական խաբւած համակիր կամ շար-
քային, պէտք է այլեւս առյաւէտ երես դարձնէ «մա-
յիս 38-ի անկախութեան», Ալէքսանդրապօլի խայ-
տառակ դաշնագրի, փետրւարեան դաւադրական ար-
կածախնդրութեան ու Պրոմէթէական հայրենադա-
ուխտի հեղինակ՝ դաշնակ շէֆերէն, որոնք գաղթա-
հայութիւնը կ'անայականօրէն շահագործելու համար
կանգ չառին ո՛չ մատնութեան, ո՛չ ահաբեկչութեան
եւ ո՛չ ալ ոճիւրի առջեւ, երես դարձնել այն շէֆերէն,
որ այսօր ամենահիւր գործակալները դարձած են ժո-
ղովուրդական եւ դեմոկրատական բոլոր ազատութիւն-
ներու եւ համաշխարհային խաղաղութեան ամենաո-
խերիմ թշնամի, ժողովուրդներու դահիճ՝ միջազգա-
յին ֆաշիզմին:

Գաղթահայութիւնը պէտք է դուրս վանէ դաշնակ
շէֆերն ու շէֆիկները ազգային իշխանութիւններէն ու

բացարձակ պօյքօթի ենթարկէ բոլոր այն մշակութա-
 յին, օգնութեան խաչերու եւ երիտասարդական-մարմ-
 նակրթական կազմակերպութիւնները, որոնց ետին
 կանգնած են, իրենց իսկական անունով ու դիմակով
 փոքրփոքրէն ներկայանալու այլեւս անկարող եղող
 դաշնակ շէֆերը:

Հայ կղերը պէտք չէ այլեւս թոյլատրէ, որ հայ
 եկեղեցին իբր բնմ ու պրօպականտի միջոց ծառայէ
 այն մարդոց, որ եկեղիցւոյ մէջ իսկ վայրագօրէն ըս-
 պաննեցին Դուրեան Արքեպիսկոպոսը:

Դաղթահա՛յ աշխատաւորութիւն, աւելի մօտէն
 հետաքրքրելի Խորհրդային Հայրենիքի յաղթական
 վերելքովը, բե՛ր անոր նիւթական ու բարոյական ա-
 ջակցութիւնդ. Հայաստանի Օգնութեան Կոմիտէն—
 204-ը եւ Բարեգործականը դարձնելով աւելի քան
 երբեք զանգւածային ու համագաղութային կազմա-
 կերպութիւններ: Հիմնելով, կազմակերպելով ու զօ-
 րացնելով Հայրենակցական—Վերաշինաց միութիւն-
 ներդ, պէտք է տենդազին փարիս ու օժանդակես նոր
 աւաններու կամ բնակարաններու շինութեան գործին
 աւելի զանգւածային ու աւելի յաճախակի դարձնե-
 լու համար ներգաղթը դէպի Մայր Հայրենիք՝ Խոր-
 հըրդային Հայաստան:

Վ Ե Ր Զ



Գ Ի Ն

ԱՌԻՐԻԱ ՆԻ ԼԻԲՐԱՆԱՆ՝ 7 Ս. Գ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ 2 Ֆրանկ

Ստանալու համար դիմել. —

Ժողովրդային Գրասուհի

Պուլֆառ-տը-Ֆրանս թիւ 32

ՀԱՂԵՊ

Ա. Աբիկեան

Պուրճ-Համմուտ, թիւ 145

ՊԵՐՈՒԹ

ՄԿՐՏԻՉ ՊԵՐԷՃԻԿԵԱՆ

ԴԵՐՁԱԿՎԱՃԱՌԱԿԱՆ

ՊԵՐՈՒԹ, ԿՈՒՐՕ փողոց, քրամկէյի Ռըմէյի կայան

Կը պատրաստէ, անգլիական ամենաընտիր

կերպասներով, վերջին նորածեւութեամբ

ՉԱՓԻ ՎՐԱՅ ԶԳԵՍՏՆԵՐ

Ունի ամէն տեսակ շապիկներու, փողկապի, գուլպա-
ներու, արանց եւ կանանց արդուզարդի առարկաներու

հոխ մթերք խիստ ղիւրամատչելի գիներով:

Այցելեցե՛ք եւ անպայման գոհ պիտի մնաք:





